

**ՀՅՌ Գանատայի Կեդրոնական կոմիտեն հանդիպում ունեցավ դեսպան Լ. Մարտիրոսեանի հետ**



Կարդալ էջ 3:

**ՀՅՌ մամուլյու եւ հանրային կապերու խորհրդատուովի յայտարարութիւնը**



Կարդալ էջ 3:

**Լոռիի եւ Ջաւախքի ի նպաստ Գանատայի զօրակցական հաւաքներուն հանգանակուեցաւ մօտ ' 75 հազար տոլար**



Կարդալ էջ 3  
(Լուսանկարը Մայք Թաշմեանի)

**Արցախի Նախագահը Այցելեց Միացեալ Նահանգներու Քոնկրես**



Կարդալ էջ 5:

**Հայաստանի Ա. Հանրապետութեանն Անդրուստ խորհրդատուով**



Կարդալ էջ 4:

**Լիբանանի Զբօսաշրջութեանն Անխարար Աւետիս Կիտանեան հանդիպում ունեցաւ Գանատայի հայութեան հետ**



Կարդալ էջ 4



**Komitas.ca**  
FUNERAL COMPLEX  
*Always standing by our community*  
PRE-PLANNING WITH 0% INTEREST  
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS  
5180 Salaberry, Montreal, QC H4J 1J3 T 514.331.0400

**Աստուածաշունչի առաջին տպագրութեան 350-ամեակին Անդրուստ գիտատուով**



Կարդալ էջ 3:



**2018 PILOT** MSRP STARTING FROM \$40,390\*  
2018 PILOT SHOWN



**HONDA GABRIEL**  
7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
www.hondagabriel.com  
Kevork Asadourian  
Vahan Vartanian  
Haig Khobassarian  
**HONDA**



MARCHÉ

# ADONIS

*Joyeuses Pâques*  
*Happy Easter*

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé - Place Vertu - DDO  
Brossard - Laval - Laval Est - Gatineau  
Scarborough - Mississauga

[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca) /   

# Աստուածաշունչի առաջին տպագրութեան 350-ամեակին նուիրուած գիտաժողով եւ Ոսկան Երեւանցիի ֆիլմի ներկայացում

Հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի, կազմակերպութեամբ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին եւ ձեռնարկի հովանաւորութեամբ՝ Տէր եւ Տիկին Արթուր եւ Ալիս Մարգարեաններու, Շաբաթ, 10 Մարտ 2018-ին, տեղի ունեցաւ Աստուածաշունչի առաջին տպագրութեան 350-ամեակին նուիրուած գիտաժողովը եւ Ոսկան Երեւանցիի ֆիլմի ներկայացումը:

Բացման խօսքը կատարեց ձեռնարկի նիստավար՝ պրն. Հրաչ Գասպար, որ ներկայացուց ձեռնարկի կարեւորութիւնը համաշխարհային մակարդակի վրայ եւ ծանօթացուց ներկաները Ոսկան Երեւանցիի եւ իր դարը: Պրն. Գասպար շնորհակալութիւն յայտնեց, բոլոր քաղաքական ներկայացուցիչներուն, եկեղեցական պետներուն, որոնք ներկայ էին ձեռնարկին, ինչպէս նաեւ գիտաժողովի եւ ֆիլմի ներկայ հանրութեան:

Գիտաժողովի առաջին դասախօսն էր Փրոֆ. Ատրիանա Պարրա, որ խօսեցաւ Աստուածաշունչի եւ աւանդութեան մասին: Վերապատուելի Տոթթ. Մանուէլը ձին-պագեան ներկայացուց Հինգերորդ դարու Աստուածաշունչի առաջին հայերէն թարգմանութեան մինչեւ Երեւանցիի տպագիր օրինակը: Խոսակ Արք. Յակոբեան ներկայացուց Հայերէն Աստուածաշունչի կանոնական կառույցը եւ Ոսկան Երեւանցիի տպագրած տարբերակը: Բարգէն Արք. Չարեան, գիտաժողովի վերջին դասախօսը, կատարեց Հաւատքի ու ազգակերտման պատմական գուգահերներ եւ անդրադարձաւ տպագիր առաջին հայերէն Աստուածաշունչի ներազգեցութեան մասին: Գիտաժողովի համադրիչն էր՝ պրն. Հրաչ Գասպար:

Ձեռնարկի ընթացքին ցուցադրուեցաւ ՈՍԿԱՆ ֆիլմը, որուն բեմադրիչն է՝ Յակոբ Փափազեան եւ տեղի ունեցաւ ընդունելութիւն:

Գիտաժողովի աւարտին, հարց եւ պատասխանի բաժնէն ետք, Բարգէն Արքեպիսկոպոս շնորհակալութիւն յայտնեց բոլոր դասախօսներուն, նիստավարին, ձեռնարկի հովանաւորներուն եւ կազմակերպիչներուն:

# ՀՅԴ մամլոյ եւ հանրային կապերու խորհրդածողովի յայտարարութիւնը

ԵՐԵՎԱՆ.- ՀՅԴ Հանրային կապերու գրասենեակը Մարտ 12ին փոխանցեց հետեւեալ յայտարարութիւնը.

«10էն 12 Մարտ 2018, Երեւանի մէջ գումարուեցաւ ՀՅԴ մամլոյ եւ տեղեկատուական այլ միջոցներու եւ հանրային կապերու պատասխանատուներու խորհրդածողովը, որուն կը մասնակցէին 12 երկիրներէ շուրջ 40 խմբագիրներ եւ հանրային կապի պատասխանատուներ:

Խորհրդածողովը անդրադարձաւ ՀՅԴ աշխարհատարած լրատուամիջոցներու գործունէութեան, արձանագրեց յաջողութիւններն ու գոյութիւն ունեցող հիմնահարցերը, քննարկեց հայաստանեան եւ համահայկական հարցերու լուսարանման պարագան, արդի աշխարհի մէջ տեղեկատուական դաշտի դիմադրուած մարտահրաւէրները, ՀՅԴ հանրային կապերու ռազմավարութեան սկզբունքները եւ իրականացման կառուցակազմները:

Առանձին քննարկման նիւթ դարձաւ Հայաստանի Հանրապետութեան 100ամեակի ձեռնարկներու հարցը՝ կուսակցական լրատուամիջոցներու ընկերներու դիտանկիւնէն:

Խորհրդածողովը կարեւոր համարեց գործակցութիւնը հայ մամուլի միւս միջոցներուն հետ՝ Հայաստանի, Արցախի, ազգային այլ հարցերու հետապնդումը համադրուած ջանքերով իրականացնելու գործին մէջ:

Մերժելով հակապետական, ա-պագային, արտաքին եւ ներքին ապակառուցողական հակաքարոզութիւնը, խորհրդածողովը միաժամանակ կարեւոր համարեց մամուլի բազմակարծութիւնը, այլակարծութեան իրաւունքը եւ դատապարտելի համարեց ազատ խօսքի նկատմամբ դրսեւորուող որեւէ կաշկանդում»:

# ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն հանդիպում ունեցաւ ՀՀ դեսպան Լեւոն Մարտիրոսեանի հետ

Շաբաթ 10 Մարտ 2018-ին, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի պատուիրակութիւնը, ընկերակցութեամբ ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանի, Օթթաուայի մէջ աշխատանքային հանդիպում մը ունեցաւ Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Տիար Լեւոն Մարտիրոսեանի հետ: Հանդիպման ընթացքին, ՀՅԴ պատուիրակութիւնը դեսպան Մարտիրոսեանի հետ քննարկեց Գանատայի հայ համայնքը յուզող շարք մը հարցեր, որոնք շարքին Գանատա-Հայաստան յարաբերութիւններու հողովոյթը, Արցախեան հիմնահարցը, Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութեան ուղղութեամբ տարուող աշխատանքները եւ Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրութեան 100-Ամեակի նուիրուած միջոցառումները:

# Լոռիի եւ Զաւախքի ի նպաստ Գանատայի գորակցական հաւաքներուն հանգանակուեցաւ մօտ 75 հազար տոլար

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի «Լոռի-Զաւախք» յանձնախումբին կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէին, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան, ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական վարչութեան, Մարտ 17-ին եւ 18-ին յաջորդաբար Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ տեղի ունեցան գորակցական հանդիսութիւններ՝ ի նպաստ Լոռիի եւ Զաւախքի: Հաւաքներու ընթացքին ելոյթ ունեցաւ հայրենիքէն ժամանած երգիչ Գէորգ Հաճեանը, որ իր գուսանկական եւ ազգային-հայրենասիրական երգերով խանդավառ պահեց ստեղծեց ներկաներուն համար: Հանդիսութիւններու գլխաւոր պատգամաբերն էր «Հորիզոն» շաբաթաթերթի գրական յանդուածի խմբագիր Վիգէն Արաւահանը, որ շեշտեց Հայրենիքի հիւսիսի հատուածի դարպասապահ շրջաններ հանդիսացող Լոռիի եւ Զաւախքի ռազմաքաղաքական կարեւորութիւնը: Հաւաքներու ընթացքին գոյացաւ մօտ 75 հազար տոլար:

# Վահէ Պերպերեան Վանգուվրի մէջ

Շաբաթ, 17 Փետրուար 2018-ին, Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճիւղի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ պարահանդէս, Հայ կեդրոնի «Լազարեան» սրահէն ներս, ի նպաստ Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Վարժարանի բարգաւաճման, որուն մասնակցեցան շուրջ 200 ներկաներ, որոնք հիւրասիրուեցան համադրած ճաշերով եւ անուշահամ քաղցրեղէններով, պատրաստուած ՀՕՄ-ի ընկերութիւններու կողմէ:

Երեկոն սկսաւ Կազմակերպչական յանձնախումբի եւ վարչութեան անունով Ընկերութիւնի Գլխաւոր Յակոբեանի բարի գալուտեան եւ շնորհակալական խօսքերով: Ան դնահատեց եւ իր երախտագիտական զգացումները փոխանցեց բոլոր անոնց, որոնք ներկայ էին սոյն երեկոյին եւ մինչեւ օրս կը զօրակցին գաղութի բարգաւաճման:

Օրուան բեմավարուհին էր ընկերութիւնի Մեղրիկ Չափանեանը: Ան իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Հայ ժողովուրդի դարուող կեանքի ճանապարհին, կրթութիւնն ու հոգեւոր հաւատը գոյապայքարի յաղթանակը են դարձած: Այդ գործով իրենց լուրջ առաքելութիւնը ունին սփիւռքի մէջ տարածուած հայկական դպրոցները, որոնցմէ է Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» շաբաթօրեայ վարժարանը: Շաբաթօրեայ վարժարանի գործունէութիւնը ուղղուած է մէկ նպատակի՝ նուիրուել հայապահպանութեան կարեւորագոյն գործին, պատրաստել, դաստիարակել հայ ոգիով մեծցող, ազգային ու հոգեւոր արժանապատուութեամբ տոչորուած պատանիներ ու աղջիկներ: Այս անկեղծ ու ջերմ մթնոլորտը հիմքը դարձած է վարժարանիս մեծ ընտանիքին, ուր կը թափաւորեն սէրն ու բարութիւնը, գիտութեան լոյսն ու հայապահպանութեան ոգին: Ուսուցիչ-աշակերտ-ծնող յարաբերութիւնները հիմնուած են փոխադարձ յարգանքի եւ վստահութեան վրայ: Բարձրացնենք մեր հայկական փառքը, բարձրացնենք «Արագ»ը, հասցնենք գագաթին»:

ՀՕՄ-ի Վանգուվրի «Արագ» մասնաճիւղի անունով խօսք առաւ ատենապետուհի ընկերութիւնի Սօսի Թէրզեանը, որ շեշտեց, թէ «Արագ» Շաբաթօրեայ դպրոցը այն մեծ իրագործումներու մէկ փորձիկ մասն է, որ կը կատարուի Արեւմտեան ցամաքամասի նաղաղական Ուիկիմանիա ակտիւններու գտնուող Վանգուվրի քաղաքին մէջ, ՀՕՄ-ի մեծ ընտանիքին ղեկավարութեամբ: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր հաւատարիմ համակիրներուն, որ իրենց նիւթական աջակցութիւններով կը սատարեն «Արագ» վարժարանի բարգաւաճման:

Ապա բեմավարուհին բեմ հրաւիրեց «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի տնօրէն տիար Վահէ Յակոբեանը, որ իր խօսքին մէջ յայտնեց, թէ «Արագ» վարժարանը հնարաւորութիւն կու տայ ոչ միայն սորվելու հայոց լեզուն, այլեւ ճանաչելու պատմական, հոգեւոր ժառանգութիւնը, մօտ լինելու հայու ինքնութեան եւ սիրելու այն, ինչ որ աւանդ ստացած ենք մեր նախնիներէն, գիտակցելով որ իւրաքանչիւր սերունդ



առաքելութիւն ունի անաղարտ պահել-պահպանելու մեր սրբազնասուրբ լեզուն եւ պատասխանատուութեամբ վերաբերելու հայ մնայլու կոչման: Հայերէն ուսուցման բարձր որակի ապահովում, ինչպէս նաեւ մարդկային լաւագոյն յատկանիշներու սերմանում. ահա ա՛յս նպատակներուն իրագործումը վերածուել է նուիրեալ առաքելութեան, որուն ձեռնամուխ եղած է դպրոցին ներկայ ուսուցչական կազմն ու Ուսումնական խորհուրդը:

Ապա հանդէս եկաւ Լոս Անճըլըսէն ժամանած հուշակաւոր մենախօս Վահէ Պերպերեանը, որ ներկայացուց իր «Ուրեմն» մենախօսութիւնը:

Ընթացքին տեղի ունեցաւ վիճակահանութիւն, որուն յաջորդեց սուրճի եւ անուշեղէնի սպասարկութիւն:

Ձեռնարկը յաջողութեամբ պսակուեցաւ, որուն հասոյթը պիտի յատկացուի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի հայապահպանման ծրագիրներուն:

Մեղրիկ Սիւլահեան Զափանեան

# Լիբանանի Զբոսաշրջութեան Գախարար Աւետիս Կիտանեան հանդիպում ունեցաւ Գանատայի հայութեան հետ

Մարտ 4-6 Լիբանանի Հանրապետութեան զբոսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեան իր առաջին այցելութիւնը կատարեց Գանատա: Այցելութեան ընթացքին նախարար Կիտանեան գանատահայ գաղութին իրազեկ պահեց Լիբանանի մօտակայ ընտրութիւններուն՝ գանատաբնակ լիբանանահայերու քուէարկութեան մասին:

Գանատահայ գաղութին հետ նախարարին իրազեկման հանդիպումները կայացան՝ Կիրակի Մարտ 4-ի յետմիջօրէի ժամը 2:00-ին՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ եւ նոյն օրուան երեկոյեան ժամը 7:30-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ:

Մոնթրէալի հանդիպումին, բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ ընկՏ. Մարալ Նազարեան, որ իր խօսքին մէջ նշեց, թէ նախարար Կիտանեանի Գանատա այցը մէկ օղակն է Հիւսիսային Ամերիկա կատարած իր այցելութեան, որուն ընթացքին ան հանդիպում ունեցաւ նաեւ Թորոնթոյի հայ համայնքին հետ, ապա ժամանեց Մոնթրէալ՝ գեկուցելու Լիբանանի խորհրդարանական մօտալուտ ընտրութիւններուն մասին: Ապա ներկայացուց նախարար Աւետիս Կիտանեանի հակիրճ կենսագրականը:

Աւետիս Կիտանեան ծնած է 21 Նոյեմբեր 1966-ին, երկրորդական ուսումը ստացած է Հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանին մէջ, ապա

աւարտած է Լիբանանեան համալսարանի բնագիտութեան բաժանմունքը: Անդամ է ՀՅ Դաշնակցութեան եւ ստանձնած է կուսակցական գանազան պաշտօններ: ԸնկՏ. Նազարեան բեմ հրաւիրեց նախարար Կիտանեանը, որ նախ շնորհակալութիւն յայտնեց գանատահայութեան՝ սոյն ընտրութիւններուն առթիւ գաղութին տարած աջակցութիւնը: Ան յայտնեց, թէ վերջին շրջանին Լիբանան կ'ապրի համեմատաբար խաղաղ շրջան մը, շնորհիւ երկրի նախագահին եւ վարչապետին համախոհութեան: «Եւ մենք՝ լիբանանահայերս, ըսաւ նախարարը, Լիբանանի ճգնաժամային պայմաններուն տոկացինք եւ շարունակեցինք ապրիլ որպէս Լիբանանի հաւատարիմ քաղաքացիներ, այդ պատճառով ալ բոլոր ուժերուն կողմէ մեծ յարգանք կը վայելինք առ այսօր, հետեւաբար ժամանակն է, այս բարօր ժամանակաշրջանին, որ Դաշնակցութիւնն ու լիբանանահայութիւնը օգտուին ընձեռուած կարելիութիւններէն, եւ Սփիւռքի մեր հայրենակիցները մասնակցելով քուէարկութեանը՝ նպաստեն ոչ միայն լիբանանահայութեան, այլ նաեւ մեր ազգային հարցերուն»: Նախարար Կիտանեան այս առումով անդրադարձաւ Լիբանանի նախագահ Միշէլ Աունի վերջերս կատարած Հայաստան այցելութեան, որուն ընկերակցած էր նաեւ ինք, եւ յիշեց, թէ նախագահը Հայաստանի,

Արցախի եւ Յեղասպանութեան ճանաչման հարցերուն վերաբերեալ իր անվերապահ գորակցութիւնը յայտնած էր:

Նախարար Կիտանեան յայտնեց, թէ 2000 թուականէն ի վեր Դաշնակցութիւնը ունեցած է երկու երեսփոխաններ Լիբանանի Խորհրդարանէն ներս, մինչ քանի պայմանները փոխուած են եւ ընտրութեանց օրէնքները նոր կարելիութիւններ կ'ընձեռեն մեզի, պէտք է ամէն ճիշդի գործ դնենք, որպէսզի արդարօրէն ունենաք երեք կամ չորս երեսփոխաններ, եւ այսպիսով դառնանք իրաւական ներկայացուցիչ մեր ժողովուրդին՝ Լիբանանի քաղաքական կեանքէն ներս:

Քաջալերելով Գանատա ապրող լիբանանահայերը կատարելու իրենց քաղաքացիական եւ ազգային պարտականութիւնները, ան ըսաւ. «Գրանցուելու ճշդուած ժամանակաշրջանը անբաւարար նկատելով, ներքին համաձայնութիւն կարգաւ կարգ մը անակնկալ իրադարձութիւններ պատճառ դարձան երկարաձգուած արդիւնքներուն չկրցանք հասնիլ: Կը մտածուին նոր միջոցներու մասին՝ համալրելու քուէարկողներու պահանջուած թիւը»: Ան կարեւորութեամբ շեշտեց, որ բոլոր գրանցուողները Ապրիլ 29-ին ուղղուին քուէակեդրոններ եւ իրենց քուէն տան ուղղակի Դաշնակցութեան թեկնածուներուն: Նախարար Կիտանեան

յայտնեց նաեւ, թէ անոնց որոնց լիբանանեան փաստաթուղթերն ու անցագիրները ի գորտէն են ալլելս, դեպքանատունը դիւրութիւններ կ'ընծայէ նորոգելու եւ նոր անցագիրներ ապահովելու շատ կարճ ժամանակամիջոցի ընթացքին (առաւելաբար մէկ շաբաթ) եւ գրեթէ անվճար (1000 լիբանանեան ոսկի):

Փարատելու համար գրանցուողներուն մտահոգութիւնը՝ քուէարկութեան համար Օթթաուա մեկնելու, նախարարը յայտնեց, թէ այդ հարցը եւս լուծուած է, եւ քուէակեդրոններ պիտի նշանակուին Մոնթրէալի եւ Թորոնթոյի մէջ:

Իր խօսքի աւարտին նախարարը նշեց, թէ Դաշնակցութեան թեկնածուներու ընտրատարածքներն են Պէյրութ մայրաքաղաքը, Մաթրնի շրջանն ու Այնճարը: Ան կոչ ուղղեց լիբանանահայ մեր հայրենակիցներուն վերջին ճիշդ չինայելու՝ ի նպաստ լիբանանահայութեան, ազգին եւ հայրենիքին: Ծնորհակալական խօսք ուղղեց Գանատայի մէջ Ընտրական յանձնախումբին եւ ՀՅԴ Կեդրոնական կոմիտէին՝ այս առնչութեամբ իրենց տարած անխոնջ աշխատանքին համար:

Սոնա Թիթիզեան

# Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան Գուրուած խորհրդաժողով՝ «Յեղասպանութեան պետականութիւն. 900 օրուան հանրապետութիւն»

Երեքշաբթի, 13 Մարտ 2018-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Մոնթրէալի McGill համալսարանին մէջ, տեղի ունեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան նուիրուած խորհրդաժողով մը՝ «Յեղասպանութեան պետականութիւն. 900 օրուան հանրապետութիւն» թեմայով, կազմակերպութեամբ ՀՅԴ «Արմէն Գարօ» Ուսանողական միութեան, Universite de Montreal-ի Հայ Ուսանողներու միութեան, Concordia-ի Հայ Ուսանողներու միութեան, McGill-ի Հայ Ուսանողներու միութեան եւ ներկայութեամբ յատկապէս երիտասարդներու հոծ բազմութեան:

Բացման խօսքով հանդէս եկան McGill-ի Հայ Ուսանողներու միութեան համանախագահներէն Նաչիկ Պալեանը եւ Concordia-ի Հայ Ուսանողներու միութեան նախագահ Կայել Գույումեանը: Պալեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն եւ կազմակերպող միութիւններուն, ապա Կայել Գույումեանն նշեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումին պատմական կարեւոր իրադարձութեան պատմագիտական հիմունքներով քննարկելու եւ անդրադառնալու կարեւորութիւնն ու բեմ հրաւիրեց օրուան զբոսաշրջար դոկտ. Լալէ Մանճիկեան, որ կարճ նախաբան մը ներկայացուց Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծման պայմաններուն, Սիմոն Վրացեանի, Արամ Մանուկեանի, Յովհաննէս Քաջազ-նունիի, Արմէն Գարոյի մասին, ինչպէս նաեւ նշեց, թէ սոյն նախաձեռնութիւնը կը վայելէ Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Լեւոն Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Դոկտ. Մանճիկեան ներկայացուց օրուան երեք գեկուցաբերները. UCLA համալսարանի փրոֆեսոր եւ պատմաբան դոկտոր Ռիչըրտ Յովհաննիսեանը, UCLA համալսարանի փրոֆեսոր, հեղինակ եւ գիտաշխատող դոկտոր Ռուբինա Փիրումեանը եւ ժընեւի Webster համալսարանի փրոֆեսոր եւ լրագրող դոկտոր Վիզէն Չըթըրեանը:

Դոկտ. Յովհաննիսեան անդրադառնալով Յեղասպանութեան անմիջապէս ետք Հայաստանի Հանրապետութեան ստեղծման դժուարին պայմաններուն՝ ըսաւ. «Մեծ դժուարութեամբ ստեղծուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը, երբ մարդիկ կը մահանային համաճարակներէ մեր ղեկավարները եւս աշխարհի չորս կողմէն համախմբուեցան Հայաստան, որոնցմէ շատեր մահացան իրենց ժողովուրդին հետ՝ նոյնպէս տառապելով համաճարակներէ: Անոնք բացառիկ մարդիկ էին, նաեւ սխալներ գործեցին, բայց հաւատացին հայ ժողովուրդի տեսլականին, հաւատացին գերադոյն նպատակին եւ ամբողջովին նուիրուեցան անոր: Այս է պատճառը, որ այսօր մենք կը յարգենք եւ կը մեծարենք այդ օրերու մեր ղեկավարները»: Ան յիշեց, թէ Հանրապետութեան առաջին տարուան աւարտին Հայաստան կ'ապրէր քառասուն իրավիճակ, երբ շրջափակուած եւ անընդհատ կռիւներու մէջ էր. «Ղարաբաղի, Ախալքալաքի եւ Զանգեզուրի պայքարը նոր էջ, այլ այդ օրերուն մեր տկար եւ նորաստեղծ հանրապետութիւնը եւս կը մղէր այդ պայքարը», ըսաւ ան: Դոկտ. Ռիչըրտ նաեւ յիշեցուց, թէ հայ դատը վտանգուած էջ, ինչպէս շատեր կը կարծեն, այլ ամբողջ հայկական յեղափոխական շարժումը իր ստեղծման առաջին օրէն իսկ նուիրուած էր երկրին, որ Վանն է, Կարինն է, Մուշն է: Ան անդրադառնալէ ետք Սեւրի Դաշնադրին, իր խօսքը եզրափակեց ըսելով. «1918-ին կերտուած Հանրապետութիւնը մեզի շնորհեց հայ-

րենիքէն մասունք մը, այսօրուան մեր հիմնական մարտահրաւէրներէն մէկն է պահպանել այդ մասունքը եւ կերտել այնպիսի հայրենիք մը, ուր փափաքի ապրիլ ամէն հայ»:

Երկրորդ գեկուցաբեր դոկտ. Ռուբինա Փիրումեան իր խօսքին սկիզբը նշեց, թէ հայ պատմագիրները այսօր, երիտասարդ պատմագիրները յատկապէս, որոնք կ'ուսումնասիրեն այս կարճ բայց յոյժ կարեւոր ժամանակաշրջանը մեր պատմութեան, նոր մօտեցումներ կը ցուցաբերեն, անկախ սովետական շրջանին իրենց աւանդուած մօտեցումներէն, ձեռքազատուելով պոլշեւիկեան քարոզչութեան խեղաթիւրած պատմութեանէն, որ մօտ 70 տարի մատուցուեցաւ մեր յարգարական սերունդներուն: Դոկտ. Փիրումեան անդրադառնալով ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականին, ըսաւ. «Ես կ'երագմ եւ կը հաւատամ, որ մեր այս երազը օր մը անպայման պիտի իրականանայ, որովհետեւ ես իմ մանկութեանս ականատես եղայ Յօրս կեանքի տանջալից ընթացքին, երբ հալածուեցաւ որպէս դաշնակցական գործիչ եւ աքսորուեցաւ Սիպրիա, ան ինչպէ՞ս շարունակեց հաւատալ իր երազին եւ իր կեանքին մինչեւ վերջին շունչը նուիրուեցաւ հայ ժողովուրդի դատին»: Դոկտ. Ռուբինա իր խօսքը եզրափակեց ըսելով. «Նման խորհրդաժողովներ թող պատճառ եւ սկիզբ հանդիսանան մեր բոլորին համար՝ վերանորոգուելու, հոգեփոխուելու եւ անցեալի սխալներէն սորվելու եւ չկրկնելու. ա՛յս պիտի ըլլայ մեր ճանապարհը դէպի յաղթանակ»:

Խորհրդաժողովի վերջին գեկուցաբեր դոկտ. Վիզէն Չըթըրեան իր գեկուցումով կենսական հարցադրումով մը, թէ՛ ինչո՞ւ անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի Առաջին Հանրապետութեան պատմութիւնը. ապա ըսաւ. «Մենք պարտաւոր ենք սերտելու այդ ժամանակաշրջանը, որովհետեւ այդ մէկը մաս կը կազմէ համաշխարհային պատմութեան, նկատի առած որ ան կ'առնչուի համաշխարհային Առաջին պատերազմին եւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան. այդ ժամանակաշրջանը ուսումնասիրելով մենք ոչ միայն կը վերլուծենք մեր անցեալի պատմութիւնը, այլ այդպիսով նաեւ մենք կը յայտնաբերենք մեր ներկայի՝ իրավիճակը, յատկապէս Միջին Արեւելքի հետ կապակցաբար»: Անդրադառնալով Օսմանեան կայսրութեան իշխանութեան տակ երկար դարեր ապրած հայ ժողովուրդի հոգեբանութեան ան շեշտեց, թէ այդ տարիներուն հայ ժողովուրդին մօտ անկախութեան դադարը չբացած էր՝ որպէս արդիւնք ստրկութեան, սակայն 1915-1918-ի ժամանակահատուածի արիւնալի դէպքերը եւ ոչնչանալու սպառնալիքը ստիպեցին հայ քաղաքական միտքը՝ անկախութեան դիմելու որոշումին յանգելու: Դոկտ. Չըթըրեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Հասկնալու համար թէ՛ ի՞նչ կը պատահի այսօր Միջին Արեւելքի մէջ, յատկապէս՝ Աֆրիկի մէջ, պէտք է երթանք դէպի անցեալ եւ սերտենք մեր պատմութիւնը, որովհետեւ անոնք յար եւ նման են»: Ան աւելցուց, թէ մեծ պետութիւնները յիշողութիւն չունին եւ կարիքը չունին ունենալու, սակայն մենք պարտաւոր ենք սերտելու մեր պատմութիւնը եւ անկէ դասեր քաղելու:

Խորհրդաժողովի աւարտին տեղի ունեցան հարցադրումներ ներկաներուն կողմէ, որոնց լուսաբանական պատասխաններ տուին երեք գեկուցաբերները:

Սոնա Թիթիզեան

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website [www.arsarmenianschool.ca](http://www.arsarmenianschool.ca)

 Այցելեցէ՛ք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝ [www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

# Արցախի Նախագահը Այցելեց Միացեալ Նահանգներու Քոնկրետ

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան 14 մարտին այցելած է Միացեալ Նահանգներու Քոնկրետ: Նախագահը հանդիպում ունեցած է արտաքին հարցերու յանձնախումբի խումբ մը անդամներու հետ, քննարկած Արցախ-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն, դարաբաղաները և տագնապի խաղաղ լուծման եւ շրջանային հոլովոյթներուն վերաբերող հարցեր:

Այնուհետեւ՝ Քոնկրետին մէջ կազմակերպուած է ընդունելութիւն՝ նուիրուած արցախեան շարժման 30-րդ տարեդարձին:

Իր խօսքին մէջ նախագահ Սահակեան կարեւոր նկատած է Միացեալ Նահանգներու օրէնսդիր բարձրագոյն մարմինին մէջ կազմակերպուած հանդիպումները՝ նշելով, որ անոնք նաեւ կը բարձրացնեն «մեր պատասխանատուութեան աստիճանը՝ յամառ ու քրտնաջան աշխատանք իրականացնելու, երկկողմանի յարաբերութիւնները ա՛լ աւելի խորացնելու ու զարգացնելու գործին մէջ»:

«Ես լաւատես եմ՝ այդպէս ալ պիտի ըլլայ, քանի որ Ամերիկայի Միացեալ Նահանգները մենք կը դիտարկենք իբրեւ բարեկամ երկիր, պետութիւն, որ միլիոնաւոր հայերու համար դարձած է երկրորդ հայրենիք: Լաւատես եմ, որովհետեւ մենք այստեղ ունինք հաւատարիմ, ազնիւ եւ անշահախնդիր բարեկամներ, որոնք արդէն երկար տարիներ մշտապէս Արցախի հետ եղած են, կ'աջակցին մեր ժողովուրդին, աշխարհին ճշմարիտ տեղեկութիւններ կը ներկայացնեն մեր երկրին մասին: Մենք բարձր կը գնահատենք մեր բարեկամական կապերը, որոնք կը նկատենք մեծ հարստութիւն», իր ելոյթին մէջ շեշտած է Արցախի Հանրապետութեան նախագահը:

Նախագահ Բակո Սահակեան նշած է, որ Հանրապետութեան մէջ կարեւոր կը նկատեն ամերիկացիներու սատարումը Արցախին, եւ այստեղ իրենց ուրոյն տեղը ունին Միացեալ Նահանգներու Քոնկրետի Ներկայացուցիչներու տունն ու Մերակոյտը, բարեկամ քոնկրետականներն ու ծերակուտականները:

Նախագահը արժեւորած է Ուաշինկթընի շօշափելի դերակատարութիւնը մեր շրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան պահպանման, դարաբաղաներու տագնապի խաղաղ եւ արդարացի

լուծման գործին մէջ:

«Միացեալ Նահանգներուն հետ յարաբերութիւններու զարգացումն ու խորացումը եղած է, կայ եւ պիտի մնայ մեր արտաքին քաղաքականութեան հիմնարար ուղղութիւններէն մէկը», ընդգծած է նախագահ Բակո Սահակեան:

Նախագահ Սահակեան Արցախի Հանրապետութեան պետական պարգեւներ յանձնած է Միացեալ Նահանգներու խումբ մը քոնկրետականներու եւ ծերակուտականներու՝ Արցախին սատարելու եւ Արցախ-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններու զարգացման գործին մէջ շօշափելի ներդրում ունենալու համար:

## Նախագահ Սահակեանը Բարձր Գնահատած է ՀՅԴ Արեւելեան Ամերիկայի Կառոյցի Գործունէութիւնը

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան 14 մարտին Ուաշինկթընի մէջ այցելած է Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի գրասենեակ, հանդիպում ունեցած կառոյցի ղեկավար կազմին եւ աշխատակիցներուն հետ:

Նախագահ Սահակեան բարձր գնահատած է Հայ դատի յանձնախումբին աշխատանքը ազգային տարբեր խնդիրներու լուծման գործին մէջ՝ երախտագիտութիւն յայտնելով Արցախին վերաբերող հարցերը միշտ յատուկ ուշադրութեան կեդրոն պահելու համար:

Բակո Սահակեան վստահութիւն յայտնած է, որ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբին հետ սերտ փոխադարձ գործակցութիւնը միմիայն կ'ամրապնդուի՝ օրինակելի որակելով կազմակերպութեան ազգանուէր գործունէութիւնը:

Նոյն օրը Արցախի Հանրապետութեան նախագահը հանդիպում ունեցած է ՀՅԴ Արեւելեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի ղեկավար կազմին հետ:

Հանդիպումի ընթացքին քննարկուած են Արցախի ներքին եւ արտաքին քաղաքականութեան, Արցախ-սփիւռք համագործակցութեան, Միացեալ Նահանգներ-Արցախ կապերու զարգացման վերաբերող տարբեր հարցեր:

Երկրի ղեկավարը բարձր գնահատած է ՀՅԴ Արեւելեան Ամերիկայի կառոյցի գործունէութիւնը՝ ուղղուած Արցախի սատարման, համագոյն կարեւորագոյն խնդիրներու լուծման, Հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման՝ որ ապագային եւս աշխատանքները կը շարունակուին նոյն եռանդով եւ արդիւնաւէտութեամբ:



նիք-սփիւռք կապերու ամրապնդման՝ որ ապագային եւս աշխատանքները կը շարունակուին նոյն եռանդով եւ արդիւնաւէտութեամբ:

## Համբարեան. «Բ. Սահակեանի Այցելութիւնը Մեծ Նուաճում է Արցախ - Միացեալ Նահանգներ Յարաբերութիւններուն Համար»

«Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի այցելութիւնը մեծ նուաճում է Արցախ-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն համար: Մեր ժելով Պաքուի անխոհեմ առաջարկը՝ խոչընդոտել երկկողմանի բանակցութիւնները, կ'ընդունինք եւ կը հաստատենք, որ Միացեալ Նահանգներ-Արցախ թափանցիկ բանակցութիւնները խաղաղութեան տանող միակ կարելի ճամբան են», նշած է Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան:

Հանդիպումին ներկայ էին Միացեալ Նահանգներու Քոնկրետի հայկական յանձնախումբի համանախագահներ Յրենք Փալոն, Ճեքի Սփիլըր եւ Տէյվիտ Վալտասօ, փոխնախագահ Էտրմ Շիֆ եւ ներկայացուցիչներ Տէյվիտ Միսիլին, Ճիմ Քոսթա, Աննա Էջօ եւ Պրետ Շերման, հայկական պատուիրակութեան անդամ-

ներ՝ Արցախի արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան, խորհրդականներ Դաւիթ Իշխանեան եւ Դաւիթ Մելքումեան, նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայան: Անոնց կ'ընկերակցէին Միացեալ Նահանգներու մէջ Արցախի ներկայացուցիչ Ռ. Աւետիսեան եւ Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Գրիգոր Յովհաննիսեան:

## Պաքու կը Բողոքէ Բակո Սահակեանի Ուաշինկթըն Այցելութեան Դէմ

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը չորեքշաբթի, 14 մարտին բողոքագիրք մը յանձնած է Ազրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռապրէթ Սեքութային՝ այս օրերուն տեղի ունեցող Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի մայրաքաղաք Ուաշինկթըն այցելութեան դէմով: Պաքու քննադատած է յատկապէս կարգ մը քոնկրետականներու հետ Սահակեանի հանդիպումները՝ միաժամանակ կոչ ուղղելով Ամերիկային, որ յարգէ միջազգային սկզբունքները եւ վնաս չհասցնէ Ազրպէյճանի ինքնիշխանութեան:

 **ՅՕՍ-ի Մոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն Չորեքշաբթի ժամը 12:00-էն 4:00:**

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:

 **Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

**Մարտ 5-էն սկսեալ, «Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը պիտի սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն, մէկ ժամուայ տեւողութեամբ:**

<b>Videotron:</b> HD838 կամ SD238	Երեքշաբթի - Երեկ, ժամը 9:00-ին (առաջին տիտուս)
<b>Bell Fibe:</b> HD1216 կամ SD216	Չորեքշաբթի - Կ.է. ժամը 2:00-ին
	Հինգշաբթի - Երեկ, ժամը 6:00-ին եւ առաւոտեան ժամը 12:30-ին
	Շաբաթ - առ. ժամը 7:00-ին եւ Երեկ, ժամը 11:00-ին
	Կիրակի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 4:00-ին եւ առ. ժամը 1:00-ին
	Երկուշաբթի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 5:00-ին եւ առ. ժամը 1:00-ին

Ուղիղ տրամալում [www.icitelevision.ca](http://www.icitelevision.ca)

**ALINE BEKEREJIAN**

NOTAIRE • NOTARY

**ՆՈՏԱՐ ԱԿԻՆ ՊԵՐԵՐԵՃԵԱՆ**

Achat	Ստեւար	Purchase
Hypothèque	Սկզբի Կայրածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կայրածք	Estate
Marriage	Սնուակցիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

[aline.b@notarius.net](mailto:aline.b@notarius.net)  
[www.abnotaires.com](http://www.abnotaires.com)

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais  
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Փրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

# ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի ճաշկերոյթը Վարդանանց տօնին առթիւ



Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց աւանդական դարձած Վարդանանց տօնին առթիւ ճաշկերոյթը:

Բեմի խօսուն ձեռագործները, որոնք պատրաստուած էին ողբացեալ ընկերուհի Անահիտ Դերձակեանի ինքնաշխատութեամբ, գրաւեցին ներկաները: Օրուան խօսնակ ընկերուհի Սօսի Խարապոյեան հանդէս եկաւ բարի գալուստի խօսքով եւ բարեմաղթութիւններով, ապա Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանի, Վ. եւ Ա. Սարաֆեան նախակրթարանին խումբ մը աշակերտներ, ընկՏ. Լուսին Փալանճեանի ղեկավարութեամբ, ձուխացուցին մթնոլորտը իրենց արտասանութեամբ, երգերով եւ թատրոնով:

Ամէն տարուան նման, ճաշկերոյթի համեղ ճաշերը սիրալոյսով պատրաստուած էին մասնաճիւղի պարսկահայ ընկերուհիներուն եւ համակիրներուն կողմէ:

Պարսկահայ ընկերուհիներէ կազմուած այս յանձնախումբը իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը կը շարունակէ ցուցաբերել 30 տարիներէ ի վեր՝ գանազան օգտաշատ ծրագիրներու: Ընկերուհիները՝ Անահիտ Ապաճեան, Ատրինէ Ապաճեան, Շաքէ Ամէնճեան, Արծուիկ Ասատուրեան, Կրէթա Բատայեան (մահացած), Ազատուհի Գասպարեան, Արշի Էհրամճեան, Մերի Թարխանեան, Էլիզ Զիքարեան, Յասմիկ ՔաղխուղազադէՏ, Բիայնա ՔաղխուղազադէՏ, Թալին ՔաղխուղազադէՏ, Լուսի Ֆրէնդեան, գնահատուեցան մասնաճիւղի վարչութեան կողմէ, հայերէն տառերը կրող փողկապներով, ձեռամբ՝ ատենապետուհի ընկերուհի Լիւսի Շահինեանի:

Ճաշկերոյթը աւարտեցաւ Գերաշնորհ Տէր Բարբէն Արք. Չարեանի սրտի խօսքով, որուն ընթացքին տեղի ունեցաւ գնահատադիրներու բաշխում՝ Սրբազան Հօր կողմէ, հետեւեալ պարսկահայ ընկերուհիներուն, որոնք 30 տարիներ շարունակ մինչեւ օրս մաս կազմած են այս յանձնախումբին. ընկերուհիներ՝ Յասմիկ ՔաղխուղազադէՏ, Բիայնա ՔաղխուղազադէՏ, Թալին ՔաղխուղազադէՏ, Արշի Էհրամճեան, Լուսի Ֆրէնդեան, Անահիտ Ապաճեան, Ատրինէ Ապաճեան եւ Արծուիկ Ասատուրեան:

Գերաշնորհ Տէր Բարբէն Արք. Չարեանի «Պահպանիչ» ու փակուեցաւ ձեռնարկը:

# ԲԱԼԵՆԻՆ

Վերջերս Գանատայի Լաւալ քաղաքին մէջ լոյս տեսած «Բալենին» մանուկներու գիրքը ժամանակակից հայ հաւաքական կեանքի հազուադիւր յառաջդիմական երեւոյթներէն է: Գիրքին հեղինակ Թալին Լատոյեանը իր այս ստեղծագործութեամբ ոչ միայն փշրած է վատաբողջ նախապաշարունակներու ու յետամնաց կարծրատիպերու պատուարը, այլ իր սեփական ներշնչութեամբ, արհեստավարժական ու գագազական միաձուլ շարախով, ամբողջովին ներգրած՝ գրական այս կտորին մէջ:

«Բալենին» յատուկ կարիքներ ունեցող մանուկներու մասին մանկական պատմուածք մըն է, օժտուած՝ անտիպ նկարներով ու բանաստեղծական գիւրզնկալ կառոյցով: Գիրքին բովանդակութիւնը լուսարանական ու դաստիարակչական ուղեցոյց մըն է երեխաներու, գիրքն է ծանօթացնելու յատուկ խնամքի կարօտ մանուկներու իրականութեան, անոնց իւրապատկութիւններուն, իրենց հետ վերաբերելու պատշաճ եղանակին, մարդու մէկութեան գաղափարին ու ընկերային համարկումի անհրաժեշտութեան: «Բալենին» թէեւ, ըստ ձեւի, մանուկներու գիրք է, այդուհանգերձ անիկա խօսուն է նաեւ չափահասներու, որոնք կոչուած են կեանքի պատրաստելու այնպիսի սերունդ մը, որ ո՛չ միայն գիտէ ապրիլ այլ նաեւ ապրեցնել իր հետ, ո՛չ միայն գիտէ զարգանալ եւ յառաջանալ այլ նաեւ օգնել զարգացնելու ու յառաջացնելու իր շրջապատը:

Լատոյեանի ճառագայթող կորովը միաժամանակ սպեղանի է այն ծնողներուն, որոնք լուռ ու ինքնամոլով կը դիմադրուեն նոյնանման պարագաներ: «Բալենին» ու սակայն, հեղինակին նպատակը կ'անցնի լացի ամբողջ ուս մը տրամադրելու սահմանները, ու կնճոտ իրականութիւնները ընդունելու, դժուար կացութիւններու հետ համակերպելու, անոնց մասին խօսելու, գրականութեան կառչած մնալու եւ այդ բոլորը սիրոյ ու փոխ յարգանքի պատուանդանին վրայ բանեցնելու, կենցաղային այլընտրանք մը կը ներկայացնէ:

«Բալենին» գիրքէ աւելի աշխարհընկալման եզակի մօտեցում է: Կեանքի շարժած սեպերուն դիմաց տակաւին գեղեցիկն ու բարին տեսնելու ու արժեւորելու կարողութիւնն է: Վերջապէս, այդ գեղեցկութեամբ ու բարութեամբ զինուած, կեանքի ընթացքը լաւատեսութեամբ ու եռանդով շարունակելու խիզախութիւնն է:

Նշեմ, որ Շաբաթ, 27 Յունուար 2018-ին, Լաւալի Հայ կեդրոնի «Պարոնեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ «Բալենին»-ի շնորհահանդէսը, որուն ընթացքին Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Վարդան Վրդ. Թաշճեանը, կատարեց գիրքին գինեծօնը եւ ներկայացուց անոր խորհուրդը:

Շաբաթ, 7 եւ Կիրակի, 8 Ապրիլին, կէսօրէ ետք ժամը 1:00-էն 5:00, Լաւալի Indigo գրախանութիւն մէջ տեղի պիտի ունենայ գիրքի մակագրութիւն-վաճառքը: Մուտքը ազատ է, հրաւերը՝ ուղղուած բոլորին:

Գիրքը նաեւ կը վաճառուի Համագայիին գրատարածին եւ Cafn de la presse-ին մօտ (2864 Rue de Salaberry, Montreal, QC H3M 1L3), իսկ Ապրիլ 7-էն սկսեալ Indigo գրախանութիւն մէջ, Լաւալ (900 Boulevard le Corbusier, Laval, QC H7N 0A9):

Յաւելեալ տեղեկութիւններու համար գրմե՛լ՝  
<http://www.paleny.ca>  
<https://www.facebook.com/Palenythebook/>

Խաչիկ Խաչերեան

# Տարածեցէք ձեր «Յորիզոն»ը

Այցելեցէք <a href="http://hitunes.ca">hitunes.ca</a> կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը	Ունկնդրեցէք <a href="http://triktrak.ca">triktrak.ca</a> կայքէջի հայկական համացանցային ռատիօմասի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շափեկան հարցազրոյցներ
---	---

**CIBC**

**Aline Shnorhokian**  
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876  
Fax: 450 688-7555  
Cell: 514 797-1375  
[aline.shnorhokian@cibc.com](mailto:aline.shnorhokian@cibc.com)

Groupes Sutton - Performer Inc.  
123 Place Frontenac  
Pointe-Claire, QC H9R 4Z7

**Sutton**

**ALBERT ARKILANIAN**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker

[aarkilianian@sutton.com](mailto:aarkilianian@sutton.com)  
Cell: 514.962.8822  
Bur: 514.426.9595  
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

NISSAN | VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS | HONDA

GABRIEL

**Kevork Asadourian**  
Directeur des ventes - usagé  
Sales Manager - Pre-Owned

[kasadourian@gabriel.ca](mailto:kasadourian@gabriel.ca)

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4  
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967  
[www.nissangabriel.com](http://www.nissangabriel.com) • [www.hondagabriel.com](http://www.hondagabriel.com)

**École De Conduite AZIG**  
Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur  
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM  
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns  
Financial Statements  
Bookkeeping  
Business Plan

**NATALIE SKAFF, CPA, CGA**  
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

[nat.skaff@gmail.com](mailto:nat.skaff@gmail.com)  
Tel. (514) 963 3363  
2866 Rue De Chamonix  
Saint-Laurent, Québec  
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

**NAZARETH CLASSIC GRILL**

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6  
Tel: 450.937.4064  
Email: [resto.nazareth@hotmail.com](mailto:resto.nazareth@hotmail.com)

**SAMUEL TOPALIAN**  
450 682-1644

**AUTO SAMSON**

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE  
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ

**Hayk Hartounian**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker

C 514.574.6162  
B 514.333.3000

**NETTOYEUR MARIE-CLAIRE**

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE  
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal  
Tél: 514.334.7830

# Մոնթրեալի մէջ տեղի ունեցաւ Զաւախքի եւ Լոռիի ի նպաստ զօրակցական հանդիսութիւն

Կիրակի, 18 Մարտ 2018-ին, երեկոյան ժամը 6-ին, Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Զաւախքի եւ Լոռիի ի նպաստ զօրակցական հանդիսութիւն, կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի «Լոռի-Զաւախք» յանձնախումբին, հովանաւորութեամբ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէին, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան եւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական վարչութեան, ներկայութեամբ Գանատայի Թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տէր Բարգէն Արք. Չարեանի, հոգեւոր հայրերու, ՀՅԴ Բիւրոյի, Կեդրոնական կոմիտէի, կոմիտէներու, ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան եւ տեղական վարչութիւններու, ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան եւ այլ մարմիններու ներկայացուցիչներու եւ հանդիսատեսներու հոծ բազմութեան:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ «Մեր հայրենիք» օրհներգով, ապա օրուան բեմավար ընկՏ. Աշխէն Յարութիւնեան բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ, որուն մէջ ան խորին շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք եկած էին իրենց զօրակցութիւնն ու աջակցութիւնը ցուցաբերելու Հայաստանի հիւսիսային ամրոցը հանդիսացող Գուգարաց նահանգի Զաւախքի եւ Լոռիի շրջաններուն ի նպաստ տարուող յոթ կարեւոր ծրագիրներուն:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի Լոռիի եւ Զաւախքի շրջաններու օժանդակութեան եւ հանգանակութեան համակարգիչ յանձնախումբի անունով խօսք առաւ յանձնախումբի ատենապետ ընկ. Գաբրիէլ Սոմունճեան, որ շեշտեց, թէ այս յանձնախումբին գործունէութիւնը պիտի չսահմանափակուի հանգանակային ձեռնարկներով, այլ պիտի մշակուին այդ շրջաններուն մէջ կազմակերպական եւ հասարակական կեանքին վերաբերող ծրագիրներ, ի պահանջեալ հարկին՝ տրամադրելով նաեւ մարդու: Ան իր խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն եւ ներկաներուն:

Համագաղայինի «Անի» պարախումբի մենակատարուհի Աննա Գուգուեան հանդէս եկաւ «Մշոյ աղջիկ» մենապարով, որմէ ետք տեղի ունեցաւ Զաւախքի շրջանի պատմական ու ջախջախահայրուն դիմադրաւած դժուարութիւնները ներկայացնող «Դէպի երկիր Զաւախք» տեսերիզը, պատրաստուած ՀՕՄ-ի Զաւախքի օժանդակութեան ծրագիրներու յանձնախումբին կողմէ: Նշեալ յանձնախումբը կը գործէ 2001-էն ի վեր եւ առ այսօր իրականացուցած է



բազմաթիւ մեծածաւալ եւ մեծածախ ծրագիրներ Զաւախքի մէջ:

Հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբը այս առթիւ Հայաստանէն հրաւիրած էր մերերգիչ եւ խմբավար ընկ. Գէորգ Հաճեանը, որուն հակիրճ կենսագրականը ներկայացուց բեմավար ընկերուհին. Գէորգ Հաճեան ծնած է Այնճար, Լիբանան, յաճախած է Մեծի Տանն Կիլիկիոյ դպրեմանքն ու Համագաղայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցը: 2005-էն ի վեր հաստատուած է Հայաստան եւ իր երաժշտական ուսումը կատարելագործած է Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը: Ղեկավարած է զանազան երգչախումբեր, ինչպէս նաեւ մաս կազմած է անուանի երգչախումբերու՝ որպէս մեներգող:

Ընկեր Գէորգ Հաճեան իր անզուգական ձայնով հանդէս եկաւ գուսանական եւ ազգային-հայրենասիրական երգերու շարանով մը, որով մեծ խանդավառութիւն ստեղծեց սրահէն ներս, որմէ ետք ցուցադրուեցաւ «Երկիր Մետիա»ի կողմէ պատրաստուած տեսանիւթ մը ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպած Վանաձորի ամառային ճամբարին մասին: Սոյն ճամբարը կ'իրագործուի 2011 թուականէն ի վեր՝ 9-15 տարեկան պատանիներուն համար:

Մուշեղ Իշխանի «Հայաստան» եր-

կարաշունչ բանաստեղծութիւնէն հատուածներ ասուներեց Սոնա Թիթիգեան Կէտիկեան, որմէ ետք Համագաղայինի «Անի» պարախումբէն երիտասարդներ ելոյթ ունեցան «Տօնական Հայաստան» պարով, պարուսոյց ձօ Աւագեանի դիկավարութեամբ, ապա ցուցադրուեցաւ Լոռիի շրջանի ՀՅԴ-ի վերանորոգուած կեդրոնի բացման արարողութեան մասին, որ տեղի ունեցած էր 6 Դեկտեմբեր 2016-ին, տեղւոյն հեռուստակայանի սիւնած տեսանիւթը:

Օրուան պատգամներն էր «Հորիզոն» շաբաթաթերթի անգլերէն եւ Ֆրանսերէն յաւելուածներու, ինչպէս նաեւ Գրական յաւելուածի խմբագիր ընկ. Վիգէն Արրահամեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Լոռիի մարզի օժանդակութեան եւ վերաշխուժացման ի խնդիր Գանատայի շրջանի ստանձնած պարտականութեան եւ իրագործումներուն, ինչպէս նաեւ Զաւախքի մէջ ՀՕՄ-ի իրագործած ծրագիրներուն: Ընկ. Արրահամեան իր խօսքի աւարտին ըսաւ. «Այսօր դուք անսացիք մեր կոչին եւ եկաք սատարելու Լոռիի եւ Զաւախքի հայութեան ամրապնդման միտող ծրագիրներուն, որովհետեւ այդ ծրագիրներուն անհրաժեշտութեան գիտակցութիւնը կայ ամէն հայու հոգիին մէջ: Հայաստանի հիւսիսային ամրոցի հզորացման

պահանջը համագաղային պահանջ է, համահայկական հնչեղութեամբ»:

Միւրուած երգիչ Գէորգ Հաճեանի համերգին երկրորդ մասը մեծ ոգեւորութիւն ստեղծեց իր բացառիկ կատարողութեամբ, ոգեշնչիչ ձայնով եւ վարակիչ յուզումով: Ընկ. Հաճեան համերգին աւարտին շնորհակալական խօսք ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին եւ ներկաներուն, ինչպէս նաեւ քաջալերեց բոլոր անոնք, որոնք սատար կը հանդիսանան մեր հայրենիքին:

Գանատայի Թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տէր Բարգէն Արք. Չարեան իր սրտի խօսքին մէջ կարեւորութեամբ շեշտեց. «Հայաստանը միայն Երեւան չէ, միայն զբօսաշրջութեան վայր չէ, Հայաստանը նաեւ մեր մարզերն են, մեր սահմաններն են, Արցախն է եւ Զաւախքն է, եւ մեր պարտականութիւնն է զօրավիգ կանգնել անոնց»:

Ապա Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով փակեց երկուն, որմէ ետք տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցան նուիրատուութիւններ, աւարտին յայտարարուեցաւ, թէ Թորոնթոյի եւ Մոնթրեալի մէջ տեղի ունեցած այս զոյգ զօրակցական ձեռնարկներուն հանգանակութեամբ մօտ 75 հազար տոյար:

Սոնա Թիթիգեան

## Ս. Նշան եկեղեցւոյ անդամական ընդհանուր ժողով

Ս. Նշան Հայ Առաքելական եկեղեցւոյ 35-րդ անդամական ընդհանուր ժողովը գումարուեցաւ Գեմպրիճի Հայ կեդրոնի «Փոստաճեան» սրահէն ներս, Մարտ 4-ին, 37 ժխայիններու ներկայութեամբ: Եկեղեցւոյ հովիւ Հոգեշնորհ Տ. Յովհաննէս Վրդ. Սաղտըճեանի աղօթքով կատարուեցաւ ժողովի բացումը, ժամը 1:15-ին, որմէ ետք տարբ. վարանդ Ջէյթրեան եւ տիկ. Սիլվա Վարդանեան ընտրուեցան ժողովակազմներու կողմէ, որպէս ատենապետ եւ քարտուղար, վարելու համար ժողովը:

Կատարուեցաւ 2 հոգաբարձուներու ընտրութիւն: Տիկ. Հուրի Ժիպինեան եւ տիկ. Մարիա Թութիկեան ընտրուեցան փոխարինելու համար տեարք Աւօ Գարատուեանն ու Զարեհ Քէնտրիճեանը: Յաջորդ տարեշրջանի հոգաբարձութեան անդամներն են.

Պրն. Վարանդ Գապագեան, Տիկ. Մարիա Թութիկեան, Տիկ. Հուրի Ժիպինեան, Տիկ. Նինա Մուրատեան, Պրն. Վահան Մովսիսեան, Պրն. Ժորժ Քէնտրիճեան, Տիկ. Ռոզալին Քէշիշեան: Խօսք առնելով Գանատայի Ազգ. Վարչութեան շրջանի ներկայացուցիչ տարբ. Պարգեւ Թիթիգեան ժողովակազմներուն փոխանցեց Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի ողջոյնը:

Կ. Հանգէտեան

## Վանգուվրի Համագաղայինի «Վարագ» մասնաճիւղը նշեց Բարեկենդանը

Կիրակի, 11 Փետրուար 2018-ին, առաւօտեան ժամը 11-ին, կազմակերպութեամբ Վանգուվրի Համագաղայինի «Վարագ» մասնաճիւղին, տեղի ունեցաւ Մանկաշխարհ ծրագիրը:

Մանկաշխարհ ծրագիրին այս ամսուան նիւթը Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի «Բարեկենդան» հերթաթիւն էր: Մանկաշխարհի խմբակի անդամները՝ Ասպետ Չոլաքեան, Մանիա Չոլաքեան, Քնար Համաձեւեան եւ Բայիկ Տօլրամաճեան, թատրոնի ձեւով ներկայացուցին օրուան խորհուրդը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Արի Մետրոպ Չոլաքեանը: Երեխաները պատրաստեցին Բարեկենդանը բնութագրող ձեռագիր աշխատանքներ եւ մասնակից դարձան խաղերու:

Մանկաշխարհի խմբակը ամբողջ մէկուկէս ժամ ուսուցանեց եւ խանդավառ մթնոլորտի մէջ փոխանցեց Բարեկենդանի իմաստը:

Մանկաշխարհ ծրագիրը, որ կը գործէ Վանգուվրի Համագաղայինի «Վարագ» մասնաճիւղի հովանաւորութեամբ, միամտեայ դրութեամբ զարկ կու տայ հայապահպանման աշխատանքներու, ի միտի ունենալով նոր սերունդին փոխանցել մեր հարուստ մշակոյթը:

Մեղրիկ Սիւլահեան Զափանեան

# Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Ժ.

**Գրուի Երրորդ**  
1915 - Վան-Բուլանուի-Մալազկերտ

Յաղթութեան ու վերածնունդի շրջան է: Հարուած աշխատանքի մը պատկերման է: Յոռետեսութիւնը սարսած է: Խորշակը դեռ չէ դադար մեզ: Երկրի հոծ ու յաղթական ժողովրդի ոգին կը ձուլուի Կովկասէն եկող գինուորական ճիւղերուն: Կը համախմբուինք, կը կազմակերպուինք, ազգ ու պետութիւն դառնալու համար կը զգեստաւորուինք:

Վանի մէջ հայոց կառավարութիւնը կը հիմնուի: Վանը, լեռնային, բոլորի մտքին մէջ կը դառնայ, հայոց առաջին մայրաքաղաքը, ուր կայ հայ իշխանութիւն, հայ բանակ, հայ վարչական կազմ: Յենարան անոր՝ յաղթական ժողովուրդ մը: Հայոց անկախութեան առաջին ճառագայթն է այս: Պատմութեան մէջ անջնջելի վարձատրութիւն մը պիտի մնայ այս իրողութիւնը. վարձատրութիւն մը հայ մարտնչող ժողովուրդին, վասպուրականցիին, վարձատրութիւն մը նաեւ հայկական ազատարար կամաւորական բանակին:

Վանի գոյամարտը եւ յաղթանակը պիտի մնայ ամենէն լուսաւոր կէտը հայկական յեղափոխութեան եւ ինքնապաշտպանութեան: Անիկա իր արժէքովը պատիւ պիտի բերէ համայն հայութեան, որ լայնատարած Տաճկաստանի մէջ, անպատրաստ ու շուար, խողխողուեցաւ: Շատ տեղեր հերոսական դիմադրութիւններ կազմակերպեցին, բայց յաղթանակի պսակին չարժանացան՝ գերազանց ուժերու ու ձախող դասաւորուած պայմաններու պատճառով:

Յետագայ սերունդները, վերածնունդ մեր հայրենիքին մէջ, ապաքինած հոգեկան եւ ֆիզիքական բազմաթիւ վէրքերէն, պիտի մոռնան համատարած յոշոտումը մեր աշխատաւոր բազմութեան, բայց չպիտի մոռնան Վանի հերոսամարտը: Ան մեր ամբողջ ժողովրդի թափած կորովի եւ հերոսութեան կոթողը պիտի մնայ, եւ պարծանքով իշխատակուի սերունդէ սերունդ (8):

Այս յաղթանակին մէջ կամաւորական բանակն ունի իր վճռական դերը: Լուրջ որ եւ է պատմաբանի դատաստանի առջեւ, կամաւորական շարժումը պիտի արդարանայ ու երախտագիտակն գնահատանքի արժանանայ, թէկուզ միայն Վասպուրականի ազատագրումը իշխատակուի, որպէս դրական արդիւնք տուող զբոսագ, իր զինուորական բոլոր գործերուն մէջ:

2.

Ռուսական զինուորական բարձր իշխանութեան կողմէ Արամ նշանակուեցաւ Վանի նահանգի նահանգապետը: Այս քայլը նկատուեցաւ խոշոր զինուորութիւն մը, որ ռուսական իշխանութիւնը կ'ընէր, նկատի ունենալով յաղթական ժողովրդի եւ մարտնչող կամաւորութեան տրամադրութիւնները:

Ռուսական իշխանութիւնն իր որոշակի գործելակերպն ունէր եւ նորակազմ նահանգապետութիւնը վարչական բաժանում մը կը նկատէր: Սակայն մենք հայերս ալ մեր ըմբռնումն ու սպառնալիքներն ունէինք: Մենք Վանի հայկական իշխանութեան վրայ կը նայէինք որպէս կորիզի մը, որ վաղուայ հայկական պետութեան ազգային կառավարութիւնը պիտի դառնար: Առանց շունթայից յայտարարութիւններու, հայկական քաղաքական ուժերը այդ ուղղութեամբ սկսան կեդրոնանալ:

Արամ, նահանգապետ մ'ըլլալէ աւելի, վարչապետ մըն էր: Իրեն օգնական նշանակուած էր Սիրական Տիգրանեանը: Տեղական ձեռնհաս գործիչներ որոշ տէփարթմաններու վարիչ նշանակուած էին: Դուրսէն հասնող բազմաթիւ գործիչներ, զանազան ճիւղերու մէջ, իրենց օժանդակութիւնը կը բերէին: Նահանգի հին գաւառներն ու գաւառակները կը վերակազմուէին, եւ անոնց ղեկավարութիւնը կը յանձնուէր տեղական ուժերու: Վանի հայութիւնը, մէկ խօսքով, ճակատագրական պայքարի մը մէջ յաղթական դուրս գալէն յետոյ, ինքզինքը կը գտնէր ինքնավարութեան մը առջեւ, եւ

պէտք է ըսել որ անիկա պատրաստ գտնուեցաւ իր սեփական ուժերով ինքզինքը կառավարելու:

Այսպիսով մենք, այդ ժամանակ, Վանի նահանգի մէջ կեդրոնացած կը տեսնենք հայկական երեք կարեւոր ուժեր:

Առաջինը հայկական բանակն էր, որ Վանի գրաւումէն յետոյ շփման մէջ կը մտնէր թրքական կարեւոր ուժերուն հետ, դէպի Բիթլիզ-Մուշ երկարող ճանապարհի վրայ: Սակայն այդ բանակին մասնակցող բազմաթիւ վանեցի կամաւորներ կը միանային ազատագրուած ժողովրդին, ու պահ մը պատրանքը կ'ուսնենային հանգստանալու իրենց սիրելիներուն մօտ. որով Արարատեան բանակի թիւը կը պակասէր, մասամբ՝ որոշ թուով վանեցիներու հեռացումով, մասամբ մըն ալ կատարուած գործողութիւններու հետեւանքով՝ հիւանդներ եւ վիրաւորներ գործօն շարքերէն դուրս մնալով: Այդուհանդերձ հայկական գունդերն իրենց ուժերն ամփոփած՝ կը պատրաստուէին աւելի վճռական գոտեմարտի մտնել թրքական բանակի հետ:

Երկրորդը հայկական կառավարութիւնն էր Արամի գլխավորութեամբ: Այստեղ վարչութիւնն ու ժողովուրդն իրար շողախուռած էին: Վարչական մեքենան նոր էր եւ լաւ, ու կասկածէ դուրս է որ արագ պիտի կատարելագործուէր: Ժողովուրդն ազատ էր ու ուրախ: Կեանքի եւ ինքզինքի ազատութեան հետ, անիկա տարօրինակ արագութեամբ, նուիրուեցաւ իր սեփական կեանքի դասաւորման գործին: Խլուած ազատութիւնը ժամանակաւոր չնկատուեցաւ: Ռուսական հզօր հովանին կար, որ ժողովուրդին կը մղէր քիչ մ'աւելի իր տնտեսական բարգաւաճման ուշադիր ըլլալու: Ռուսական բանակը 19-րդ դարու արշաւանքներու ընթացքին միշտ ալ առասպելական նկատուած հարստութիւն բերած էր իր հետ, որմէ օգտուելի գիտցողը հարստացած էր: Վանի ժողովրդի մեծամասնութիւնը պահ մը տարուեցաւ ռուսական դրամներու հեղեղէն, որ համաշխարհային պատերազմի ընթացքին անհամեմատ աւելի անսահման քանակութիւն մը ունէր, քան նախորդ պատերազմներուն: Ուրեմն, Վանի ժողովուրդը կ'ապրէր իր վարչական մեքենայի կազմակերպութեամբ եւ տնտեսական ու վերաշինական կեանքով: Երկուք եւ կէս ամսուայ ժամանակաշրջանը շատ կարճ էր, ու Վասպուրականի ամբողջ հայութիւնը չկրցաւ ինքզինքն ամփոփել եւ իր նահանգի սահմաններէն անդին, համազգային նշանակութիւն ունեցող ազատագրական գործով վարակուիլ: Այլապէս, մենք ականատես պիտի ըլլայինք խոշոր ժողովրդական շարժումի մը, որ պէտք է ցուցահանէր Վանի հայութիւնը, մարտնչող ու կռուի փորձառու՝ քանի մը հազարնոց ժողովրդական բանակ մը ճամբայ հանելու դէպի Մուշ-Սասուն, ուր հայութիւնն անհաւասար կռուի բռնուած էր թրքական բանակներու եւ քրդերու հետ եւ երկար ժամանակէ ի վեր, ակնդէտ, կը սպասէր ազատարար խումբերուն:

Կարելի է բնորոշել Վանի հայութիւնը հետեւեալ կերպով.՝ Ըլլայ Վանի, Երեւանի եւ այլ վայրերու մէջ, ուր համախմբուած է Վանի ժողովուրդը, այդ հաւաքանիւթները ինքնապաշտպանութեան զօրաւոր բնազդ մ'ունի եւ կրնայ հաւաքական կամք մը ստեղծել, երբ վտանգը, իր հաւաքատեղիի դռներուն առջեւն է: Նման կռիւներու ընթացքին, հերոսական է այս ժողովուրդը: Անիկա միշտ կ'ամփոփուի իր տեղի եւ իր ժողովուրդի մէջ: Սակայն այդ սահմաններէն դուրս, վանեցիին համազգային ուժով եւ ակտիւ տարր ըլլալէ կը դադրի:

Երրորդ ուժը հայ մտաւորականութիւնն էր: Վանի ազատագրումէն ամիս մը յետոյ, մենք կը տեսնենք որ ոչ միայն հայ զինուորական բոլոր մեծ ու փոքր ուժերը կեդրոնացած էին Վանի նահանգին մէջ, այլ հոգ փոխադրուած էին Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի գլխավոր անդամները, Ազգային Բիւրոյի պատասխանատու ղեկավարները, կովկասահայ գրական քանի մը մեծ դէմքեր, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ հասարակական գործիչներ, որոնք մեծերու հետ հոգ փոխադրուած էին եւ ստեղծած էին հայոց մտաւորական, վարչական եւ զինուորական այն հաւաքական սպայակոյտը, որ ի վիճակի էր ազգային իշխանութիւն մը վարելու:



Հայոց ճակատագիրը գործնական կեանքի մէջ անօրինող հաւաքական կամքը Թիֆլիսէն եւ Երեւանէն փոխադրուած էր Վան: Պատգամը Վանէն կուգար: Այդ օրերուն հայոց պատասխանատու սպայակոյտը Վանի մէջ ինքզինքը կը գտնէր նորէն ալ ծանր վիճակի մէջ, ինչ որ ունէր Երեւան եղած ատեն, երբ Վանը գրաւուած չէր: Այժմ կեանքի ու մահուան խնդիր կը դառնար Տարօնի նահանգի ազատագրութեան գործը: Բոլորի աչքերը կը դառնային հեռուն, դէպի Սասնայ բարձրաւանդակը, ու ազատագրական հրդեհը բռնկուած էր:

Ռուսական զօրքը կը դանդաղէր: Հայերը կը ստանձնէին զինուորական խիստ պատասխանատու պարտականութիւն մը իրականացնելու, ու ատով կը մղէին ռուսական բանակը նոր շարժումի մը: Հայկական կամաւորական բոլոր գունդերը կ'առաջանային Արտամէրտէն, Վանի լճի հարաւային եզերքի լեռնանցքներով, դէպի Սօրբի բարձունքները, դէպի Դատովան, դէպի Բիթլիզ, միանալու համար Զօր. Նազարէզեանի եւ Օգանովսքու բանակներուն, որոնք ուղղուած էին դէպի Մուշ-Սասուն:

Այս զինուորական դժնդակ գործողութիւններու ընթացքին հայ կամաւորական բանակը ցուցահանեց խիստ դիմացկանութիւն, յանդգնութիւն եւ իր ազատագրական կոչումին կատարեալ գիտակցութիւն: Բազմաթիւ զոհերու եւ վիրաւորներու գնով անիկա կրցաւ ընկճել թրքական բանակի դիմադրութիւնը եւ քայլ առ քայլ գրաւեց Վանայ լճի հարաւային ամբողջ երկայնքը ու ամիսէն աւելի տեւող գործողութիւններէն յետոյ, կրցաւ հասնիլ Դատովան ու կապուել Բուլանուի-Մալազկերտ շրջանի մէջ գործող ռուսական չորրորդ կորբուսին հետ (9):

Հայութիւնն իր ամբողջ հոգիով շնչակտուր կը հետեւէր հայկական ազատագրական արժիւններու խոյանքներուն, ու կը հասնէր թառելու Սիփանի եւ Նէմբութի գագաթներու վրայ, ուրկէ անոր աչքերուն առջեւ կը պարզուէր գմայլելի աշխարհ մը, Բիթլիզը իր Գիւլտէրէյով, Մուշը իր դաշտով եւ Սասնայ լեռները իրենց զինուորական կեցուածքով: Երկար ու դժուարին ճանապարհները կտրած անցած, ահա կը բախենք մեր յեղափոխութեան որորանի վերջին դուռը: Ու Տարօնի հայութիւնը ծանր զարկերու տակ՝ կը հեւայ... Յնցող թափ մը եւս, մարտնչող Տարօնը ազատագրուած կ'ըլլայ:

## ԿԱՌՕ ՍԱՍՈՒՆԻ

8) «Վասպուրականի Գոյամարտը» գրուած Օ. Միխայրեանի կողմէ եւ հրատարակուած «Հայրենիք» ամսագրի 1925-ի թիւ մէջ, սփանջելի գրուած մըն է, ուր այնքան ճշգրիտ ու վառ գոյներով տրուած է Վասպուրականի հերոսամարտի պատմութիւնը:

Վասպուրականի եւ Շատախի կռիւներու մասին ժամանակին գիրք մը հրատարակեց նաեւ Ադօն: Դէպքերու մանրամասնութեանց ծանօթանալու համար ընթերցողը կարող է լիովին գոհացում ստանալ, դիմելով այդ երկու գրքերուն:

9) Դաշնակցական յայտնի խմբապետ Խեչօն սպաննուեցաւ այդ կռիւներու ընթացքին:



# ARMENIAN HERITAGE CRUISE®

7 NIGHT WESTERN CARIBBEAN CRUISE! JANUARY 20-27, 2019

## AWARD WINNING ADVENTURE

Allure of the Seas®. Not only the most decorated ship in the Royal Caribbean fleet, it's won more awards than any other ship in the world.



Roatan, Honduras  
Costa Maya, Mexico

Leaving from Miami

Nassau, Bahamas  
Cozumel, Mexico



You must book with TravelGroup to attend our private Armenian events.

**BOOK NOW AS PRICES WILL BE INCREASING MAY 1, 2018!**

Rates are per person for double occupancy cabins:

Limited additional luxury suites available upon request.

For pricing on triple and quad occupancy cabins, please contact TravelGroup.

Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$137.45 per person is additional. Prices valid through April 30, 2018. Rates and Information subject to change at any time without notice.

INSIDE CABIN	\$949
CENTRAL PARK VIEW	\$1,049
OCEAN VIEW	\$1,129
CENTRAL PARK BALCONY	\$1,239
BOARDWALK BALCONY	\$1,239
OCEAN VIEW BALCONY	\$1,409
JUNIOR SUITES	\$2,279
GRAND SUITES	\$3,479



For Reservations Contact:

Local **561-447-0750** • Toll Free **1-866-447-0750** Ext 108 or 102

125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432 • AHC@travelgroupint.com

Call Arpi Bostajian-Ashkarian (519) 748-2672 | arpi@bostgroup.ca

[www.armenianheritagecruise.com](http://www.armenianheritagecruise.com)

# Շնորհաւոր Սուրբ Զատիկ



**Marc DEMERS**  
Mayor of Laval

**Sandra EL-HELOU**  
Souvenir-Labelle

**Ray KHALIL**  
Sainte-Dorothée

**Vasilios KARIDOGIANNIS**  
L'Abord-à-Plouffe

**Isabella TASSONI**  
Laval-des-Rapides

**Aline DIB**  
Saint-Martin

**Aram ELAGOZ**  
Renaud



## MOUVEMENT LAVALLOIS ÉQUIPE MARC DEMERS

Մ. Յակոբ Եկեղեցւոյ  
Հոգարարձոյթներ եւ դպրոցի  
անօրէնութիւնը մեծ հաճոյքով կը  
հրաւիրեն ձեզի



**ՍՈՒՐԲ ԶԱՎՈՐ**  
ԱՐԳԱՅԻՆ ՎԱՐՅԱՐԱՆ  
Վ. Ե. Ա. ՄԱՐԿՅԱՆԻ ԿՐԹԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՍՏԱՐԱՆՔԻ ԲԱՍՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒՄԸ

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ի Նպաստ Սուրբ Յակոբ Ազգային  
Վարժարանի  
Վ. Ե. Ա. Մարտիկեան Նախակրթարանի  
եւ Բաստարանձեան Երկրորդականի

Շարժաթ.  
→ **14 ԱՊՐԻԼ 2018**  
Երեկոյեան ժամը 6:30 ին

Մոնթրէալի Հայ Կեդրոն

Տեղեկութեանց եւ տեղեր  
սպասեցվելու համար դիմել  
Մենա Մանուկեանին 514-830-3205  
fondation@ecolesourphagop.com

Կը խնդրենք որ ձեր  
ներկայութիւնը հաստատէք մինչեւ  
**6 Ապրիլ 2018**

Մուտքը նա իրատուութեամբ  
Տուրք վերջ կացուցման տուցածը  
50\$ եւ վեր նա իրատուութեան

Վճարագիրները (cheque) գրել Fondation  
L'École arménienne Sourp Hagop անուան տակ





**HOMENETMEN GAMK**  
Union générale sportive arménienne | Հ.Ս.Ը.Ս. - Կամք



# ՅԱՌԱՋԻԿԱՅ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

## ÉVÈNEMENTS À VENIR



ԿԻՐԱԿԻ  
**27**  
ՄԱՅԻՍ  
MAI

**Պաշտօնական տողանցք Հայաստանի Հանրապետության 100 ամեայ տարեդարձին նուիրուած**

Parade annuelle dédiée au 100<sup>e</sup> anniversaire de l'Indépendance de l'Arménie

12 h (midi)

📍 Monument La Réparation (Parc Marcelin-Wilson)  
À l'angle du boulevard Henri-Bourassa et du boulevard L'Acadie



ՇԱՐԱԹ  
**16**  
ՅՈՒՆԻՍ  
JUN

**Միօրեայ Մարզական մրցաշարք**

Tournoi sportif et BBQ familial

8 h à 18 h

📍 Collège de Bois-de-Boulogne  
10555 ave de Bois-de-Boulogne



ԿԻՐԱԿԻ  
**19**  
ՕԳՈՍՏՈՍ  
AOÛT

**Պաշտահանդէս Kinkora Բանակավայր**

Picnic à Camp Kinkora

📍 265 Chemin du Lac Beauchamp, Saint-Adolphe-d'Howard



ՈՒՐԲԱԹ  
**21\***  
ՍԵՊՏԵՄԲԵՐ  
SEPTEMBRE

**Սկաուտական փոխանցումներ**

Transfert de groupes

19 h

📍 L'École Arménienne Sourp Hagop  
3400 Rue Nadon

\*Առ ի վաերացում

**26-27**

ՀՈԿՏԵՄԲԵՐ  
OCTOBRE

**60-ԱՄԵԱԿԻ ՅՈՐԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

CÉLÉBRATION OFFICIELLE DE 60<sup>e</sup> ANNIVERSAIRE

ԲԱՐՁՐԱՅԻՐ-ԲԱՐՁՐԱՅՈ՛ՒՐ | S'ÉLEVER ET ÉLEVER LES AUTRES



**Pharmacie  
Levon Benohanian et  
Mher Koubelian Inc.**  
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson  
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111  
F 450 681-5525  
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h  
Sam. et dim. : 9h à 17h  
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչեւ ձեր տունը.  
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.  
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)  
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում  
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝  
արեան բարակութեան (INR), շնչերակային  
ճնշման (tension artérielle), արեան շաքարի  
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի  
(cholesterol), եւն.



Համագային

Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն  
Մեծն Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղը

մեծ ուրախութեամբ կը հրաւիրէ  
Համագային Թորոնթոյի «Գլաձոր» մասնաճիւղի

«ԳՈՒՍԱՆ» Երգչախումբը



Խմբավարութեամբ Հոփսիսիմէ Թովմասեանի  
Դաշնակի ընկերակցութեամբ Վահիկ Յովհաննիսեանի

Շաբաթ Ապրիլ 7, 2018 երեկոյեան ժամը 8-ին  
Centre Arménie  
1025 Boul. Elizabeth, Laval, QC, H7W 3J7

Մուտքի ևուեր՝ \$20  
Տոմսերու համար հեռաձայնէլ՝  
Նորա Կիրիւնյեանին 514-856-0868

Association d'Amateurs de Théâtre Arménien de Montréal  
Մոնթրէալի Հայ Թատրասերները կը ներկայացնեն

## ՍԻՐՈՒՀԻՆ ԵՒ ԱՆԾԱՆՕԹԸ

Une comédie en 2 actes - mise en scène par

**ROSALIA EVEREKLIAN**



Samedi le 7 avril, 2018 à 20h  
Dimanche le 8 avril, 2018 à 19h

Vanier College Auditorium  
821 Ave. Ste-Croix, Saint Laurent, Québec

Ձեռնարկին հասցեք սխտի նուիրուի՝  
Our lady of Armenia Educational Center in Tashir  
Our lady of Armenia Center in Gyumri  
"Havessin Seryag" (Դեւոսի) In memory of Sevan Naccashian

Տոմսերուն համար հեռաձայնէլ՝  
Թէրեզ Ծապրայեան 514 331-9067  
Մարսիլ Գասարճեան 438 398-9448

Մուտքի նուեր՝  
\$25

ՈՍՏԱՅՆ

Գրադարանի մը եզակի պատմությունը

Մենք առժամաբար հանգստեան կոչուած՝ ան- գործութեան թոշակ ստացող, գոյգ մը գրադարաններ ենք. ես երէցն եմ, ընկերս կրտսերը: Կաղնեփայտէ կա- ուղցուած, ապակեպատ դռներով, շարժական դարակնե- րով: Նոյն չափերու, իրարու շատ նման:

Մի՛ գրամանաք, այո՛, մե՛նք ալ պատմութիւն ու- նինք, եզակի՛ պատմութիւն մը, որ կ'ուզենք պատմել ձեզի:

Մեր ծննդավայրը բուրգերու երկիրն է, այնտեղ՝ մայրաքաղաքի հի՛ն թաղերէն մէկուն մէջ հաստատու- ւած՝ Ուսթա Տսու՛իին աշխատանոցը, ուր վարպետը այնքա՛ն հմտութեամբ ու գուրգուրանքով կը կերտէր կահ-կարասիները, իր սի՛րտն իսկ դնելով անոնց մէջ. եւ երբ աւարտէր գործ մը, վերջին յղկումը կատարէր, վեր- ջին ջնարակը գարնէր, մէկ կողմ կը քաշուէր ու ի՛նչ հպարտութեամբ կը նայէր իր ձեռակերտին: Պարզ ար- հեստաւոր մը չէր ան, արուեստագէ՛տ էր:

Իմ առաջին կայքս հանդիսացաւ Տահեր թաղա- մասի Հարէթ-էլ-արապ գոհիին վրայ բացուող այդ շէնքին վերջին՝ չորրորդ յարկի յարկաբաժինը, ուր կը բնակէին առաջին տէրերս: Չեմ կրնար մոռնալ տի- րուհիին հրճուանքը, երբ հանգրուանեցի այնտեղ: Եկած էի փոխարինելու հինգած-խարխած, ինքզինք գրադա- րան կարծող պահարանները: Ինչէ՛ր ըսես չգետեղեց դարակներու վրայ՝ Տորմէն ու մօրմէն ժառանգ մնա- ցած, Պոլխէն, Վենետիկէն ու այլ վայրերէ եկած-հա- ւաքուած գիրքեր, գրքոյկներ, կաշեկազմ ու սուկէ տա- ւերով իրենց ինքնութիւնը յայտնող ի՛նչ-ի՛նչ երկեր: Որքա՛ն հպարտ էի գանոնք կրելուս համար: Եւ տեսա- բար նոր գիրքեր աւելցան դարակներու վրայ, հայերէն ու այլ լեզուներով:

Սակայն երկար չմնացի այնտեղ: Քանի մը տարի ետք տէրերս որոշեցին փոխադրուիլ Արեւաքաղաք հին անունով բայց աւելի նորաշէն արուարձանը, ուր Պա- տիւ կոչուած փողոցի նոյնպէս նորակերտ մէկ շէնքին երկրորդ յարկը հաստատուեցայ: Ձիս դրին այն սենեա- կին մէջ, ուր տէրս գրասենեակէն տուն բերած գործերը կը շարունակէր կատարել, իսկ երկու տղաքը՝ իրենց դա- սերը կը սերտէին: Բայց դարակներս այլեւս չա՛տ էին ծանրացեր, հետզհետէ աւելցող գիրքերը՝ դասագիրքերն ու բառարանները դնելու տեղ չէր մնացեր: Ահա ա՛յն ատեն էր, որ կրտսերը ժամանեց, բեռս թեթեւցուց: Իրեն վիճակուեցաւ հիւրասենեակին մէկ պատը: Քանի մը տարի ալ այստեղ անցուցինք միասին: Օր մըն ալ լսե- ցինք, որ պիտի գաղթենք: Չէինք գիտեր ի՛նչ կը նշա- նակէր գաղթել, սակայն ճար չունէինք, պիտի հետեւէ- ինք մեր տէրերուն, որոնք, ազնուաբար, մեզ ալ իրենց

հետ պիտի տանէին: Սակայն զարմացանք, տիրեցանք ալ, երբ գիտցանք որ մեր դարակներու բնակիչներէն ոմանք մեզի պիտի չընկերանային: Անոնք շարուեցան ճաշի սեղանին վրայ, ու բարեկամներ, ուսուցիչներ, քահանաներ եկան ընտրեցին իրենց նախասիրած գիր- քերը: Ափսո՛ս: Մեր տէրերը չանդրադարձա՛ն, թէ անոնցմէ ոմանք, որոնց նոր հրատարակութիւննե՛րը միայն պիտի տարուէին իրենց հետ, առաջին տպագրու- թիւնն էին հայ գրականութեան տիտաններու՝ Մեծա- րեւոյցի, Սիւսանի, Վարուճանի կամ Դուրեանի: Ի՛նչ մեծ սխալ գործեցին, բայց մեզի չէր մնար կարծիք յայտնել: Մեր այս պատմութիւնը կարգացողներուն մէջ կա՞ն գիտցողներ, թէ ո՛րք են արդեօք այդ գիրքերը հիմա:

Յետոյ գաղթեցինք, կամ հասկցանք, թէ ի՛նչ ըսել է գաղթել: Մեզ երկուքս, տան կահ-կարասիներէն շա- տերու, ինչպէս նաեւ 3000 գիրք ու պարբերաթիւթ պա- րունակող խաւաքարտէ տուփերու, հագուստ-կապուստ եւ տան իրերով լեցուած ճամպուղներու եւ տուփերու հետ գետեղեցին մեծ սենեակի մը մէջ, որ բեռնարկը կը կոչուի եղեր, փակուեցան բոլոր որմերը, մնացինք մու- թին մէջ ու ճամբայ ելանք: Միշտ կը շարժէինք ու կը տատանէինք՝ աջ-ձախ, վեր-վար: Քանի՞ օր կամ քանի՞ շաբաթ տեսեց մեր այդ վիճակը, որ ճամբորդութիւն է եղեր, չեմ գիտեր, բայց ի վերջոյ կանգ առինք: Բաց- ուեցան սենեակին պատերը, ու մենք մեզ գտանք Տը լ՛Ագատի փողոցին վրայ, եռայարկ շէնքի մը առջև՝ Արքայալիւս քաղաքին մէջ: Ուժեղ մարդիկ, յատուկ գօտիներով գինուած, մեզ բարձրացուցին երկրորդ յարկ: Այս պիտի ըլլար մեր նոր տունը:

Քանի մը տարի այստեղ ապրեցանք միասին, ես ու կրտսերս, ու շարունակեցինք հաւատարմօրէն կատա- րել մեր պաշտօնը: Ատեն մը ետք մեզ իրարմէ բաժնե- ցին: Տանտէրերու անդրանիկ գաւաղը, որ իր ընտանի- քով արդէն առանձին բնակարան ունէր, գիտ իր նոր տունը տարաւ, քանի որ ծնողքին քով տեղի նեղութիւն կը զգացուէր: Ի՛նչ ընենք, ճակատագիր է, ըսի: Ձե- տեղուեցայ ներքնայարկը, ուր նոր տէրերս արդէն քա- նի մը այլ գրադարաններ ալ աւելցուցեր էին ու կը շա- րունակէին գանոնք ծանրաբեռնել օրըստօրէ: Խոստո- վանիմ, որ այդ գրադարանները, պատրաստի գնուած, մեզի չափ գեղեցիկ ու ամրակերտ չէին, բայց ասիկա մեր մէջ թող մնայ:

Յետոյ... յետոյ կրտսերն ալ եկաւ այս տունը, ես մնացի վարը, ուր ամբողջ տարածքը գրապահատի էր վերածուել, ինք բարձրացաւ վերի յարկը, ուր, նոր տի- րոջ գաւաղներուն տունէն հեռանալէն ետք, ննջարան-

ներէն մէկը աշխատանոցի էր վերածուած: Կրտսերը ստանձնեց կրել բառարանները, հանրագիտարաններն ու իբր աղբիւր ծառայող այլազան հատորները՝ գրակա- նութեան, պատմութեան եւ այլ նիւթերու վերաբերեալ: Ուրախ էինք, վերջապէս վերագտած էինք գիրար, թող թէ տարբեր յարկերու վրայ:

Այսպէս ալ շարունակուեցաւ մեր կեանքը որոշ ժամանակ մը, բայց ոչինչ կը մնայ նոյնը: Մարդ չէ հաշուած, սակայն հեռու չէ, որ 6000-ի հասեր էր թիւը հատորներուն ու պարբերաթիւթերուն, որոնք գրաւեր էին մեր երկուքին ու մնացեալ բազմաթիւ գրադարան- ներուն այլեւս արդէն ծանրաբեռն դարակները: Տակա- ւին բազմաթիւ հատորներ ալ կը գտնուէին գուրսը՝ տանտիրոջ աշխատած գրասենեակին գրադարաննե- րուն մէջ: Ի վերջոյ անոնք ալ այստեղ փոխադրուելու վտանգը կը ներկայացնէին: Ո՛ւր պիտի գրուէին:

Չեմ գիտեր ի՛նչ պատճառներով, բայց վստահա- բար չա՛տ արդարանալի, տէրս որոշեց բաշխել իր այս հարստութիւնը, բայց բաշխել այնպէս, որ շատեր կարե- նան օգտուիլ անոնցմէ:

Այդպէս էր, որ գրքերու տեղաշարժ մը ծայր տուաւ: Առաջին հերթին ասպարէզային նիւթերը, խա- ւաքարտէ 16 մեծ տուփերով, հասան Երեւանի ճարտա- րապետական համալսարան:

Թերթերու ու պարբերաթիւթերու հաւաքածոնե՛րէն շատեր գացին խմբագրատուն: Գիրքերու մեծ խումբ մը, երկու գրադարան լեցնող, հանգրուանեցին ակում- բին, մասամբ ալ դպրոցին մատենադարանները: Սկսած էինք մտահոգուիլ, հետզհետէ մեր դարակները այսպէս թեթեւալով, օր մը մենք ալ մեր գործը կրնայինք կորսնցնել: Եւ եղաւ անխուսափելի. գիրքերու վերջին պարպումին հետ, մե՛զ ալ ճամբեցին տունէն:

Ճիշտ է, գիրքերը ապահով ձեռքերու յանձնուե- ցան, միշտ տրամադրելի մնալով տէրերուս ալ գործա- ծուլութեան. վերջին խումբը, երեք գրադարան լեցնող, պատուոյ տեղ մը գրաւեց առաջնորդարանին մէջ, Սրբազան հօր անմիջական հոգատարութեան ներքեւ, ուրիշներ գարձեալ բաժին ինկան գրասէր բարեկամնե- րու, տակաւին մէկ կարեւոր մաս մըն ալ մնալով տունը՝ տանտիրոջս մօտ, գալիք տարիներուն դեռեւս օգտա- գործուելու համար, սակայն մենք երկուքս, մի քանի ուրիշ պահարաններու հետ, հանգստեան կոչուեցանք... ցնոր տնօրինութիւն:

Ես խօսեցայ մե՛ր մասին՝ փայտէ՛ կառուցուած: Ի՛նչ եղան տէրերուս ապրումներն ու հոգեվիճակները՝ ուրիշ պատմութիւն է, որ ձեզի կը ձգեմ երեւակայի... ՎԻԷԺ-ԱՐՄԷՆ

Advertisement for Ghadir Meat & Restaurant. Includes phone number 416-750-7404 and address 1848 Lawrence Avenue E, Scarborough, ON M1R 2Y4.

Advertisement for ANI Bakery and Fine Foods. Includes phone number 416-750-7400 and address 2094 LAWRENCE AVENUE EAST.

Advertisement for Noor Fine Food. Includes phone number 416 745 3111 and address 1 High Meadow Place, Unit 9, Toronto, Ontario M9L 2Z5.

Advertisement for ANI Restaurant. Includes phone number 905.761.6484 and address 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5.

Advertisement for Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage. Features Annie Varbedian, Sales Representative, with contact info 416-918-3615.

Advertisement for hearing aid source. Features Andre Ayvazyan, HIS B.A.S., with contact info 416 754 4327 (HEAR).

Advertisement for Crown Pastries. Includes phone number 647.351.2015 and address 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden), Toronto ON, M1R 2Z5.

Advertisement for I.D.A. Pharmacy Inc. Features Cassandra, with contact info 416.449.2040 and address 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2.

Advertisement for ANI BAKERY. Features Middle Eastern Pizza Lahmajoun, with contact info 416.285.7164 and address 25 Howden Road, Unit #2, Scarborough, Ontario M1R 3C8.

# Հրայր Մարուխեան Ղեկավարը

Ընկ. Հրայրի գործի մարդ ըլլալու առանձնայատուկութիւնը, ճշդապահ պաշտօնեայի նման որոշեալ ժամուն իր Աթէնքի գրասենեակէն, շրջաններուն հետ, ամէնօրեայ կապ հաստատելու, տեղեկանալու, տեղեկացնելու, ցուցմունքներ կատարելու, մղում տալու եւ աշխատանք պահանջելու արժանիքը իբրեւ ղեկավարի՝ տիրական եղաւ Դաշնակցութեան կազմակերպական շրջաններու աշխուժացման մէջ:

Միջազգային ընտանիքին կողմէ Յեղասպանութեան ճանաչման եւ Հայ Դատի պահանջատիրութեան պայքարը ամբողջութեամբ ծանրացած էր ընկ. Հրայրի ուսերուն: Ան կը հաւատար, որ ընկերավարութիւնը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անբաժանելի մասն է եւ ժողովուրդներու ազգային ազատագրական պայքարը ընկերվարական կարգերու հաստատմամբ կը հիմնաւորէր: Այդ տրամաբանութեամբ ալ կապեր հաստատեց եւրոպական ընկերվարական կուսակցութիւններուն հետ եւ հետապնդեց ՀՅԴաշնակցութեան Ընկերվար Միջազգայնականի վերանդամակցութիւնը:

Ընկ. Հրայրի գաղափարական համոզումները, մարտունակ ոգին, խոհուն, հեռատես եւ ճկուն քաղաքական գործիչի յատկութիւնները կը գրաւէին իր յարաբերութիւններուն ընթացքին, որ զինք կը զատորոշէր պարզ քաղաքագէտներէն: Ան կը հաւատար, որ հայ ժողովուրդի ազգային իտէալներու իրականացման ճամբուն վրայ պէտք է կարողականութիւն ունեցող բոլոր ուժերը, կազմակերպութիւններ թէ անհատ ազգայիններ համախմբել եւ շինարար աշխատանքի լծել քաղաքական կեանքէն ներս նուաճումներ արձանագրելու համար: Այս տրամադրութենէն մեկնելով՝ Յրանսայի եւ Յունաստանի ընկերներուն միջոցով, յատկապէս՝ Ժիւլ Մարտիրոսեանի, Հանրի Փափազեանի, Վարուժան Գնունիի եւ այլոց ջանքերով կապեր հաստատեց եւ հանդիպումներ ունեցաւ այդ օրերու Եւրոպայի քաղաքական գործիչներու, Յրանսայի արտաքին գործոց նախարար Ռոյան Տուժայի, Յունաստանի վարչապետ Անտրէաս Փափանտրէուի, Ընկերվար Միջազգայնականի ընդհանուր քարտուղար Լուիզ Այալայի հետ: Այդ շփումները շարունակուեցան՝ հասնելով մինչեւ այդ օրերու Աւստրիոյ վարչապետ, ընկերվար-գեմոկրատ Պրունօ Քրայս-քիին, Իտալիոյ վարչապետ ընկերվար Պեթինօ Քրաքսիին եւ Յրանսայի նախագահ Յրանսուա Միթերանին՝ ճամբայ հարթելով 1987ին Եւրոպական խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման:

Միջին Արեւելքի երկիրները, որոնք Յեղասպանութենէն ետք ընդունած էին տարազիր հայ զանգուածները, ընդհանրապէս դրական մօտեցում ունէին Հայկական հարցին նկատմամբ, նոյնիսկ եթէ պաշտօնապէս չէին ճանչնար Յեղասպանութիւնը: Բացառութիւն կը կազմէր Մէլուտական Արաբիան, որ միշտ թրքամէտ կողմնորոշում ունէր: Հարկ էր սէուտական պետական շրջանակներուն հետ կապեր ստեղծել եւ անոց բացատրել Հայկական հարցին քաղաքական եւ ոչ կրօնական բնոյթը:

Ընկ. Հրայրին հետ հերթական հանդիպումներէս մէկուն, երբ Համար փողոցին վրայ գտնուող իր գրասենեակը մտայ, գարմանքս մեծ եղաւ հանդիպելով Լիբանանի խորհրդարանի նախկին երեսփոխան, գործարար Անտրէ Թապուրեանին, որ իր առեւտրական գործառնութիւններուն բերումով լայն կապեր ունէր սէուտացի իշխաններուն հետ: Անտրէ Թապուրեան կարողացաւ սէուտական շրջանակներուն եւ ընկ. Հրայրին միջեւ հանդիպումներու հաստատման սատարել եւ յետագային նիւթական եւ յարաբերական կարեւոր ներդրում ունենալ Հայ Դատի աշխատանքներուն ծաւալման գծով:

Ասպարէզին բերումով ընկ. Հրայր ծանօթ էր հաշուապահական եւ ելեւմտական կարգ ու կանոնին: Բիւրոյի նիւթական գործառնութիւններուն ու իր գործուղումներուն ծախսերը իր գեղեցիկ գիրով մանրամասնօրէն ու համապատասխան հաշուեցոյցներու ընկերակցութեամբ կը տեղեկագրէր հաշուապահութեան եւ Բիւրոյի ընկերներէն կ'ակնկալէր, որ նոյն բժախնդրութիւնը ունենան:

Գործարար ըլլալով հանդերձ, ընկ. Հրայրին մէջ տիրապետողը մտաւորական մարդու կերպարն էր: Կը սիրէր ու կը գնահատէր արուեստներն ու գրականութիւնը: Իր գրասենեակին պատերը գարգարուած էին իւղանկարներով: Մէկ անկիւնը, փոքր սեղանի մը վրայ՝ Ջաւէն Նրարչեանի Պիքֆայայի Նահատակաց յուշարձանին ոսկեգոյն մանրաքանդակը: Գրասեղանի կողքին գտնուող գրադարանին մէջ, աշխատանքի թղթապանակներուն քով Ռուբէնի յուշերը եւ հայերէն ու այլ լեզուներով գրական ու պատմական արժէք ներկայացնող գիրքեր կ'ամբողջացնէին պատկերը:

## Երիտասարդական շարքերու վերաշիտուծացման յաջորդեց կուսակցութեան կազմակերպական շրջաններու ղեկավար փարքին երիտասարդականացումը: Յարկապէս ընկ. Հրայրի եւ ընկ. Սարգիս Զէյթիեանի անմիջական ցանքերով կոմիտէներու եւ կեդրոնական կոմիտէներու կազմերը համալրուեցան ուսանողական եւ երիտասարդական միութիւններէն շարքերը փոխանցուած փողոցով, 22րդ Ընդհանուր ժողովին յանգելով Բիւրոյի կազմի երիտասարդականացման:

Ընկեր Հրայր մեծ ընթերցող մըն էր: Պատմաքաղաքական եւ ընկերային հարցեր շօշափող գործեր անպակաս էին իր գրասեղանէն: Եւրոպա ճամբորդող ընկերներուն անպայման օրինակ մը կը պատուիրէր նոր լոյս տեսած գիրքէ մը, որուն մասին տեղեկացած կ'ըլլար միջազգային մամուլէն: Իսկ երբ Եւրոպա գտնուէր, ազատ ժամերը կ'անցընէր գրախանութիւններ այցելելով: Մասնաւոր յարգանք ունէր դէպի սփիւռքահայ մտաւորականութիւնը, մօտէն կը յարաբերէր Պօղոս Մնայեանին ու Վահէ Օշականին հետ: «Բագին»ը ՀՅԴ Բիւրոյի հրատարակութիւն ըլլալով՝ իր յատուկ գուրգուրանքին առարկան էր: Կը գնահատէր Պօղոս Մնայեանի հրապարակագրական աշխատանքը: Մնայուն կերպով խմբագրատուն կ'այցելէր՝ տեղեկանալու հայ մտաւորականութեան եւ յատկապէս Հայաստանի գրողներուն ազգային հարցերու գծով գրաւորած կեցուածքներուն: Կը հաւատար մտաւորականութեան ուժին ու անոր ժողովուրդներու ընկերաքաղաքական մտածողութեան զարգացման գծով բերելիք նպաստին: Նոյն տրամաբանութեամբ ալ կը մտածէր, որ մտաւորականը պէտք է գաղափարաբանական եւ կազմակերպչական կաշկանչումներով սահմանափակել, որ՝ մտաւորականը պէտք է ունենայ մտածելու եւ արտայայտուելու ազատութիւն, որպէսզի կարենայ ստեղծագործել:

1992ին Փարիզի «Յառաջ»ին մէջ բաց նամակ մը լոյս տեսաւ սփիւռքահայ շարք մը մտաւորականներու ստորագրութեամբ, որոնց կարգին՝ Վահէ Օշականը: Նամակը Համազգային Մշակութային Միութիւնը կը դատապարտէր բանաստեղծ Աբրահամ Ալիքեանի պահանջներուն հանդէպ վերապահ կեցուածք ունենալուն համար: Նամակը ստորագրողները յայտնապէս անտեղեակ էին հարցի մանրամասնութիւններուն եւ այդ նամակով սփիւռքահայ մշակութային կեանքը կը պղտորէին: Աթէնք այցելութիւններէս մէկուն, երբ այդ մասին ընկեր Հրայրին խօսեցայ՝ դատապարտելով Վահէ Օշականին ընթացքը, ընկ. Հրայր ըսաւ. «Վահէին նման մտաւորական մը պէտք է կուսակցութեան կազմակերպական կանոններով դատել, պէտք է ձգել, որ իր մտածումները արտայայտէ»:

Ընկ. Հրայր կը քաջալերէր երիտասարդ գրողները ու սատար կը հանդիսանար հրատարակչական գործին: Այդ էր պատճառը, որ նախաձեռնեց «Դաշնակցութեան Մատենաշար»ի շարքին՝ սկսելով Դաշնակցութեան հիմնադիր եւ առաջին սերունդին պատկանող դէմքերու կեանքն ու գործը ներկայացնող հատորներու հրատարակութենէն, մինչեւ Աթէնք լոյս տեսնող «Յեղափոխական գրադարան»ի կազմակերպական եւ գաղափարաբանական խորքով մատենաշարի հրատարակութիւնը:

Ընկ. Հրայր յատուկ յարգանք ունէր Բիւրոյի իր գործընկերներուն եւ ընդհանրապէս իրեն գործակից ընկերներուն նկատմամբ՝ գնահատելով անոնց կարողութիւններն ու նկարագրային յատկանիշները: Կը հիանար ընկ. Զէյթիեանի քաղաքական հոտառութեան, կը գնահատէր ընկ. Հրաչի ողջմտութիւնը, ընկ. Փամպուքեանի պատմագիտական ծանօթութիւնները, ընկ. Մոնոֆարեանի հայերէնագիտութիւնը, Սագոյին մէջ կը տեսնէր ապագայ ընկ. Զէյթիեանը (բառերը ընկեր Հրայրինն են): Մեծ յարգանք ունէր ընկեր Աբոյի եւ ընկ. Ազնաւորեանի օրինապահութեան ու խիզախութիւնները կը մշակէր աշխատանքի վրայ եղող բոլոր ընկերներուն հետ, կը լսէր անոնց ունեցած մտահոգութիւնները՝ կազմակերպական կեանքի նկատմամբ, լուծումներ կ'առաջարկէր ու կը քաջալերէր իրենց պարտականութեան մէջ:

Ընկ. Աբոյի եւ ընկ. Զէյթիեանի առեւանգումները, Սագոյին կանխահաս մահը ու ընկեր Ազնաւորեանի սպանութիւնը շատ ծանր ազդած էին ընկ. Հրայրին վրայ: Կը զգար անոնց բացակայութիւնը մեր կազմակերպական կեանքին մէջ եւ ամէն առիթով կը յիշէր զանոնք, մանաւանդ՝ ընկ. Զէյթիեանը: Առիթով մը անոր մասին անդրադառնալով՝ ինձի ըսաւ. «Սարգիսը իր տեղափոխութիւններու ընթացքին զգոյշ չեղաւ, յաճախ իրեն կ'ըսէի, որ առանձին տունէն ակումբ չգայ, որ՝ ընկերակիցը վարիչի տեղ չգործածէ, որ՝ բոլորս ալ

թիրախ ենք, մտիկ չըրաւ»:

Սագոն, Վահէն, Բենօն եւ ես միշտ մօտ եղած էինք ընկ. Զէյթիեանին: Առիթով մը Կ.Կ.ի ժողովներէն մէկուն, երբ Պուրճ Համուտի անվտանգութիւնը ապահովելու համար ժողովրդային հանգանակութիւն կատարելու հարցը կը քննէինք ընկ. Զէյթիեանի հետ, որ Կ.Կ.ի մօտ Բիւրոյի ներկայացուցիչն էր, հանգանակութեան ձեւին մէջ տարակարծիք եղանք, որուն իբրեւ հետեւանք՝ պաղութիւն մը ստեղծուեցաւ մեր եւ ընկ. Զէյթիեանին միջեւ: Երեւոյթը ընկ. Հրայրին կողմէ աննկատ չէր անցած, մեզմէ պահանջեց, որ առիթը ստեղծէինք ընկ. Զէյթիեանին տունը այցելելու եւ բացատրելու, ինչ որ կատարեցինք:

Ընկ. Հրայր ո'չ միայն յարգալից էր ընկերներու նկատմամբ, այլեւ կարեկից՝ անոնց ցաւերուն, հօր մը նման ջանալով օգտակար հանդիսանալ անոնց կամ անոնց ընտանեկան պարագաներուն դիմագրաւելու կեանքի դժուարութիւնները:

Այսպէս, ընկ. Աբոյի առեւանգումէն ետք միջոցն ու պատեհութիւնը ստեղծեց, որպէսզի տղան՝ Սերժը, Իտալիա մեկնի եւ պայուսակի ձեւագիտութեան մէջ մասնագիտանայ՝ կարենալ շարունակելու հօր գործը եւ ապահովելու ընտանիքին ապրուստը: Սագոյի մահէն ետք ընկեր Հրայր պարտատէրերու մօտ անձնապէս հետապնդեց գանձելի գումարները, հաշուեփակ կատարել տուաւ եւ գոյացած գումարով յարմարաւէտ յարկաբաժին մը գնել տուաւ, ապահով շրջանի մը մէջ, որպէսզի կիւր՝ Զուարթը եւ գաւակները արժանավայել կեանք մը ունենան:

Սփիւռքահայութեան քաղաքականացումը եւ կազմակերպական վերանորոգումը ապահովելու համար պէտք էր գաղթօճախները դուրս բերել իրենց կղզիացած վիճակէն ու իբրեւ քաղաքական կազմակերպ ուժ՝ ընդհանուր յայտարարի բերել:

Սփիւռքի ազգային, միութենական թէ ներկուսակցական–կազմակերպական կեանքը պէտք էր արդիական ու նոր մօտեցումով ղեկավարել եւ կեանքի նոր պայմաններուն հետ քայլ պահող կառույցներ յառաջացնել ու համապատասխան մասնագիտացած մարդուժ պատրաստել: Այս իմաստով Բիւրոյի անգամները եւ յատկապէս ընկեր Հրայրը իրենց մնայուն գործուղումներուն միջոցով կարողացան գաղութներու միջեւ կապերը ամրապնդել եւ անոնց մօտ համազգային գաղափարական կեդրոնացում յառաջացնել, որուն հետեւեցաւ կարգ մը կառույցներու արդիականացումը եւ ուսանց համագաղութային կառույցով օժտելու մտածումը:

Համագաղութային այդ կառույցներուն առաջին օղակը հանդիսացաւ մինչ այդ յատկապէս Միջին Արեւելքի գաղութներուն մէջ գործող պատանեկան միութիւնները համախմբել երիտասարդական միութիւններու մէջ, զանոնք դարձնել երկսեռ եւ ինքնավար՝ դուրս բերելով կոմիտէներու թաղային մտածողութեամբ գործելու եղանակէն, իսկ Բիւրոյի կողքին յառաջացնել երիտասարդական գրասենեակ՝ անոր վստահելով նոր կառույցի գաղափարական դաստիարակութեան եւ կազմակերպական կեանքի համադրումը:

Երիտասարդական միութիւններու միջգաղութային համագումարներ, սեմինարներ եւ բանակումներ սփիւռքահայ երիտասարդութիւնը ընդլուզեցին Հայ Դատի հետապնդման երկարատեւ պայքարին հետ: Գաղափարական ու կազմակերպական դաստիարակութեան առընթեր, ընկ. Հրայր յատուկ կարեւորութիւն տուաւ երիտասարդութեան հոգեկան եւ ֆիզիքական պատրաստութեան՝ խրախուսելով մարտարուեստի դպրոցներու հաստատումը գաղութներէն ներս:

Երիտասարդական շարքերու վերաշիտուծացման յաջորդեց կուսակցութեան կազմակերպական շրջաններու ղեկավար տարրին երիտասարդականացումը: Յատկապէս ընկ. Հրայրի եւ ընկ. Սարգիս Զէյթիեանի անմիջական ջանքերով կոմիտէներու եւ կեդրոնական կոմիտէներու կազմերը համալրուեցան ուսանողական եւ երիտասարդական միութիւններէն շարքերը փոխանցուած տղոցմով, 22րդ Ընդհանուր ժողովին յանգելով Բիւրոյի կազմի երիտասարդականացման:

Կուսակցական կառույցներուն յաջորդեցին ուղե-

կից միութիւններու վերակազմակերպումը, որուն մէջ առաջնորդող եւ հիմնական դեր ունեցաւ ընկ. Հրայր:

ՀՄԸՄը իր սկառուակաւ խիտ շարքերով եւ մարդակաւ խումբերով կը հանդիսանար ՀՅ Դաշնակցութեան գաղափարաբանական ուղիգիծը բաժնող ու սփիւռքահայ լայն զանգուածները շարժման մէջ դնող միութիւնը, որ կը գործէր յատկապէս Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի մէջ, Միջին Արեւելքի Երջանային վարչութեան հովանիին տակ: Վաթսուական թուականներէն ետք ՀՄԸՄի բազմաթիւ մասնաճիւղեր սկսած էին անջատաբար գործելու սփիւռքեան բոլոր գաղութներէն ներս, եւ յատկապէս՝ Միացեալ Նահանգներ, հարկ էր գանոնք համախմբել միակ կառույցի մը՝ այս անգամ կեդրոնական վարչութեան մը հովանիին տակ: Այս կառույցի յառաջացման աշխատանքը Բիւրօն վստահեցաւ եռանդամ յանձնարումներ մը՝ գլխաւորութեամբ ընկ. Վարդգէս Տէր Կարապետեանի:

ՀՄԸՄին յաջորդեց գաղութներու մէջ Ցեղասպանութեան հետ ստեղծուած տարբեր անուններու տակ եւ անջատաբար գործող բարեխրական միութիւնները համախմբել ՀՕՄի կառույցին մէջ: Հոս եւս կարելոր դեր ունեցաւ ընկ. Հրայրը:

Ընկ. Հրայրի ազգային կեանքը ժողովրդավար կարգերով ղեկավարելու համոզումն էր, որ ՀՅԴ 24րդ Ընդհանուր ժողովը մղեց որդեգրել Համազգային Մշակութային եւ Կրթական Միութիւնը ընտրովի կեդրոնական վարչութեամբ օժտելու որոշումը:

Հրայր Մարտիեան հասարակական ու քաղաքական գործիչ ըլլալով հանդերձ, դաշնակցական ղեկավարը իր մտաւորական խառնուածքով միշտ ալ կարելոր ներդրում ունեցած է հայ մշակոյթի զարգացման գծով: Այդպիսին էր նաեւ ընկ. Հրայրը: Կազմակերպական ու քաղաքական աշխատանքներով կլանուած ըլլալով հանդերձ, ան աշխատակցեցաւ դաշնակցական մամուլին, յատկապէս՝ «Դրօշակ»ին, գաղափարաբանական թէքաղաքական բնոյթի յօդուածներ ստորագրելով: Դաշնակցութեան ընկերաքաղաքական ուղիգիծը պարզաբանող եւ Հայ Դատի աշխատանքները ներկայացնող հրատարակչային դասախօսութիւններով, ինչպէս նաեւ քաղաքական թէք ներազգային հարցերու գծով Դաշնակցութեան կեցուածքները բացատրող բանախօսութիւններով սատարեց սփիւռքահայութեան քաղաքական մտածողութեան զարգացման:

Սփիւռքահայ դպրոցաշինական ծրագրերները նոյնպէս եղան ընկ. Հրայրի հետաքրքրութիւններուն առարկան: Հիմնական դեր ունեցաւ Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ձեռնարանի հաստատման սկզբնական ծրագրի մշակման մէջ, ինչպէս նաեւ հանդիսացաւ միջոց Մարտէյի ձեռնարանի ստեղծման: Ան կը հաւատար, որ Մարտէյի մէջ գիշերօթիկ դպրոցի մը ստեղծումը, (ուր կար մեծաթիւ հայ գաղութ, աշխարհագրականօրէն Ձուլիցերիոյ եւ Խալիլոյ մօտ ըլլալով), կարելոր դեր պիտի խաղար եւրոպահայ նոր սերունդներու հայեցի դաստիարակութեան մէջ: Մեծ աշխատանք տարաւ Մարտէյի ձեռնարանի շինութեան նուիրատու մը գտնելու գործին մէջ:

Իբրեւ պատմամշակութային հարստութիւն՝ ընկեր Հրայր մտնէ ծանօթ էր Հայաստանեայց եկեղեցիին ու հայորդակից անոր ոգիին, խորհուրդին եւ հաւատքին: Քաջ գիտէր Հայ եկեղեցւոյ ունեցած վճռորոշ դերակատարութիւնը հայ կեանքէն ներս պատմութեան ընթացքին: Կը հաւատար Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան իւրաքանչիւր դերակատարութեան Սփիւռքի մէջ եւ այդ պատճառով ալ ամբօրէն կառչած մնաց այդ Աթոռի անկախութեան ու անոր ունեցած դերակատարութեան Հայ Դատի պահանջատիրութեան մէջ:

Վերոնշեալ մօտեցումներէն մեկնելով, ինչպէս նաեւ իբրեւ ազգային ժողովներու անդամ, սերտ կապ ունեցաւ Կիլիկեան Աթոռի գահակալներուն հետ, մասնաւորաբար՝ Արամ Ա. վեհափառին (այն ատեն տակաւին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ), որ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի գործադիր մարմինի անդամի եւ ապա նախագահի իր հանգամանքով, ընկ. Հրայրին հետ համադրուած աշխատանքով, կարելոր դեր ունեցաւ ՄԱԿի մարդկային իրաւանց յանձնարումներին մօտ Հայոց Ցեղասպանութեան առնչուող բանաձեւի մշակման գծով:

Խառնուածքով ժողովրդավար էր ընկ. Հրայր: Հարցի մը գծով որոշում կայացնելէ առաջ կը խորհրդակցէր, ընկերներու կարծիքները կը շօշափէր եւ ապա կը համադրէր: Խորհրդակցական այդ հանդիպումները յաճախ կ'ըլլային բուռն, որոնց ընթացքին սակայն ընկ. Հրայր երբեք իր հանգամանքը օգտագործելով՝ իր կամքը չէր պարտադրեր, այլ կը համոզէր, կամ կը համոզուէր, առաքինութիւն մը, որ յաճախ կը պակսի քաղաքական ղեկավարներուն:

1986ին էր. Պուրճ Համուտի ապահովութեան եւ պարէնաւորման հսկող յանձնարումներ նոր կազմ մը յառաջացնելու համար Կ.Կի երկու անդամներով խորհրդակցութիւն մը ունեցանք ընկ. Հրայրին հետ: Հան-

դիպման սկիզբն իսկ ընկ. Հրայր ընկերոջ մը անունը առաջարկեց իբրեւ յանձնարումներ ատենապետ՝ նկատի ունենալով անոր այդ մարզէն ներս ունեցած փորձառութիւնը, իսկ մենք կը պնդէինք, որ ընկերոջ ինքնագլուխ գործելու բնաւորութիւնը, ընդհակառակը, կրնար աշխատանքներուն վնասել՝ անակնկալ ու աննախատեսելի կացութիւններ ստեղծելով, որոնց առաջըր առնել դժուար պիտի ըլլար: Երկար եւ բուռն խօսակցութենէ ետք մեր անդրդուելի կեցուածքին դիմաց ընկ. Հրայր տեղի տուաւ՝ յաջողութիւն մաղթելով մեր աշխատանքներուն:

1988ի Փետրուարին կը պոռթկար Արցախեան շարժումը: Նոյն թուականի Օգոստոսին գումարուած ՀՅԴ 24րդ Ընդհանուր ժողովը, իր ծրագրի ազգային առաջադրանքներէն մեկնած, ամբողջական գորակցութիւն յայտնելով հայրենի ժողովրդային շարժման, որդեգրեց «Դէպի երկիր» կարգախօսը եւ որոշեց Դաշնակցութեան վերընձիւղումը Հայաստանի մէջ: Տրուած որոշումներուն գործնականացումը վստահեցաւ ընկ. Հրայրին:

1989ի Դեկտեմբերին Գիւմրիի երկրաշարժէն ճիշդ տարի մը ետք, Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հրաւերով, Համազգային կրթական եւ մշակութային միութիւնը պիտի ներկայացնէր Երեւանի մէջ գումարուելիք Սփիւռքահայ մշակութային միութիւններու խորհրդաժողովին: Պէյրութի օգակայանը փակ ըլլալով՝ Երեւան պիտի երթայ Լառնաքա, Աթէնք, Մոսկուա, Երեւան ճամբով: Աթէնքի մէջ հանդիպեցայ ընկ. Հրայրին, որ Ընդհանուր ժողովի «Դէպի երկիր» որոշում-կոչի տարերքին մէջ էր: Կապի մէջ էր «Դարաբաղ» կոմիտէի տղոցմէ քանի մը հոգիին հետ: Հայրենի մտաւորականութիւնը քաջալեր էր Հայաստան գործուղուած Դաշնակցական տղոց աշխատանքին նկատմամբ:

Մեր խօսակցութիւնը ընդգրկեց ներհայաստանեան քաղաքական զարգացումները, որոնց նկատմամբ ունէր գործնապայլատ մօտեցում: Ընկ. Հրայր կը հաւատար, որ խորհրդային կարգերու փլուզումը Հայաստանէն կախեալ չէր եւ այդ ուղղութեամբ ժողովրդային որեւէ շարժում կամ ցուցական քայլ կրնար Հայաստան-Ռուսիա կապերը սրել եւ դառնալ ի վնաս Հայաստանի: Կը մտածէր, որ եթէ Խորհրդային Միութիւնը բաղկացնող հանրապետութիւններուն մեծ մասը ուզէր անկախանալ, այդ պարագային Հայաստանն ալ պիտի ընդգրկէր այդ գործընթացը: Իսկ եթէ Խորհրդային Միութիւնը չփլուզուէր, ապա առայժմ Հայաստանի անկախանալը անհնարին էր եւ այդ պարագային միակ բանը, որ Դաշնակցութիւնը կրնար ընել, միջազգային քաղաքական շրջանակներուն մօտ Հայաստանի նկատմամբ բարենպաստ մօտեցում ապահովելն էր: Ան համոզուած էր, որ նման կացութեան առջեւ ՀՅԴի Հայաստան վերադարձը պէտք էր ըլլար Հայաստանի օրուան իշխանութիւններուն հետ բանակցելով, որեւէ այլ ուղի Դաշնակցութեան համար արկածախնդրութիւն կը նկատէր:

Հանդիպման ավարտին ընկ. Հրայր գիրքերու երկու մեծկալ կապոց դաշնակցական գրականութիւն տուաւ, որ յանձնեմ Ալվարդ Պետրոսեանին, որ այդ օրերուն հայ մտաւորականութեան շարքերուն մէջ շատ գործունեայ էր եւ ծանօթ՝ իր ազգայնական մտածողութեամբ: Այնուհետեւ քաղաքական անցուղաբձերը գահավէժ ընթացք ստացան, գլխաւորաբար՝ Արցախեան ճակատի վրայ: Ընկ. Հրայր Հայաստան այցելեց, որմէ ետք 1990 Օգոստոսին ՀՅԴաշնակցութիւնը հայ ժողովուրդին ուղղուած հաղորդագրութեամբ յայտարարեց Հայաստանի մէջ իր վերընձիւղումը: Սկսան Արցախի ազատագրման զինուորական գործողութիւնները Դաշնակցական մարտիկներու անմիջական մասնակցութեամբ, որ նոր էջ բացաւ հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ: Ընկ. Հրայր գաղափարական ու բարոյական մեծ ներդրում ունեցաւ Արցախեան ազատամարտի ամբողջ ընթացքին եւ որոշիչ դեր՝ գինեալ պայքարի ու ժողովուրդի ինքնապաշտպանութեան կազմակերպման գծով:

Դաշնակցութեան ներհայաստանեան քաղաքականութիւնը սակայն, որ ըստ ընկեր Հրայրի պատկերացումին պէտք էր անկախութեան գործընթացը հասցնէր հայ ժողովուրդի պայքանական իրաւունքներու ձեռքբերման, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան իրական եւ ամբողջական հաստատման, որպէսզի Հայաստանը հասնի քաղաքակիրթ ազգերու մակարդակին, բախեցաւ նախկին խորհրդային կարգերէն վերապրած ուժերու եւ մեծապետական վերադասաւորումներու խաղին ստեղծած արգելքներուն:

Պետականութիւն կերտելու ճամբուն վրայ հայրենի իշխանութիւններուն թոյլ տուած բացթողումները, յատկապէս հայ ժողովուրդին մէջ «հայաստանցի» եւ «արտասահմանցի» տեսնելու մօտեցումը, տնտեսական քաղաքականութեան մէջ «մաֆիա»ական դրսեւորումները, շրջափակուած ըլլալով հանդերձ, իշխանութեան որդեգրած արեւմտամէտ քաղաքականութիւնը բաւարար



րար պատճառներ էին, որ Դաշնակցութիւնը իշխանութիւններուն ընթացքը քննադատէ՝ պահանջելով, որ անոնք ըլլան շրջահայեաց, պետական կառույցները զարգացնեն ազատական մօտեցումով, արհեստավարժ ու արժանաւոր անձինք պաշտօնի կոչելու քառային քաղաքականութիւն վարեն, յարգեն քաղաքացիներու տարրական իրաւունքները, հրաժարին ժողովուրդին նկատմամբ խորհրդային վարչակարգէն մնացած ճնշումի միջոցներ կիրարկելէ, չկաշկանդեն միտքի ու խօսքի ազատութիւնները, վերջապէս ձգտին իսկական ժողովրդավարութեան հաստատման:

Ընկ. Հրայրի կողմէ հրապարակաւ կատարուած Դաշնակցութեան պահանջներու բանաձեւումը, օրուան իշխանութեան կողմէ ընկալուեցաւ իբրեւ Հայաստանի դէմ ուղղուած գործընթաց, որուն գագաթնակէտը հանդիսացաւ 1992ի Յունիսի Լեւոն Տէր Պետրոսեանի կողմէ ՀՅԴ 25րդ Ընդհանուր ժողովի՝ Հայաստանի մէջ գումարման մետասաներորդ պահուստ արգիլումը, ՀՅԴաշնակցութիւնը իբրեւ «գաւազիր կազմակերպութիւն» ամբաստանութիւնը եւ ընկեր Հրայրին երկրէն արտաքսումը:

1993ի գարնան ընկ. Հրայրին հանդիպեցայ ՀՅԴ մարմիններու խորհրդաժողովին, Կիպրոս, Նիկոսիա: Ժողովէն օր մը առաջ հասած ըլլալով՝ տեսնուեցանք «Աքրոփոլիս» պանդոկը, ուր կ'իջեւանէր: Ընկ. Հրայր «ազգ» հասկացողութիւնը կը նկատէր մարդկութեան հողովոյթին ամենազարգացած աստիճանը: Կը հաւատար, որ ազգերու ազատագրումը կ'առաջնորդէ մարդ անհատի ազատութեան ու բարգաւաճման, որուն պէտք է ձգտի ամէն հայ: Այս տրամաբանութենէն մեկնելով՝ հայրենի իշխանութիւններուն Դաշնակցութեան ու իր նկատմամբ տրուած որոշումը կը նկատէր կամայական ու խիստ վերաւորական, որ կը խոչընդոտէր ժողովրդավար եւ արդար կարգերու կայացումը Հայաստանի մէջ: Մտահոգ էր, որ պատահածը Դաշնակցութեան նկատմամբ քաղաքական հալածանքներու սկիզբ մըն է, որուն պէտք է պատրաստ ըլլալ եւ այսուհետեւ իշխանութիւններու նկատմամբ նոր մօտեցում որդեգրել: Յետագայ դէպքերը, դաշնակցական ընկերներու ձեռքակալութիւնները եւ բանտարկութիւնները հաստատեցին ընկ. Հրայրին մտահոգութիւնները:

Յաջորդական երեք օրերու ընթացքին ժողովը քննեց օրակարգի վրայ եղած հարցերը՝ ծանրանալով մասնաւորաբար հայրենի իշխանութիւններուն նկատմամբ ՀՅԴ Ընդհանուր ժողովին որդեգրած քաղաքականութեան գործնականացման աշխատանքներուն վրայ: ՀՅԴ մարմիններու ժողովը եղաւ մեր վերջին հանդիպումը:

1998 Դեկտեմբեր 26ին, ցուրտ օր մը, Երեւանի Թոխմախկէօլ ձիւնածածկ գերեզմանատան քաղաքային պանթէոնը, Արամ Մանուկեանի շիրմին հանդիպակաց կողմը, «Վէրքերով լի» երգելով, ընկ. Հրայրին մարմինը յանձնեցինք հողին, այն հողին, որուն ազատութեան եւ անկախութեան համար իր կեանքը նուիրեց:

Այն պահուն, երբ իւրաքանչիւր ներկայ, իբրեւ վերջին յարգանք, կը ջանար ափ մը հող նետել ընկերոջ թաց շիրմին, յիշեցի մեր առաջին հանդիպումը Պէյրութ՝ «Պրիսթոլ» պանդոկը: Աչքիս առջեւ պատկերացաւ ընկ. Հրայրին վայելուչ հասակը, մոխրագոյն մազերն ու հաստ ակնոցները, եւ զգացի, որ ինձի համար կուսակցական կեանքի ամբողջ ժամանակաշրջան մը փակուեցաւ:

Մարդիկ կան, որոնց մեկնումը կ'ազքատացնէ կեանքը: Ընկ. Հրայր Դաշնակցութեան երկնակամարին վրայ երեցաւ դաշնակցական առաջին սերունդէն եօթանասուն տարիներ ետք, 1963էն սկսեալ մաս կազմելով յաջորդական Բիւրօններուն եւ իր մտածելակերպով ու գործելակերպով դաշնակցական ղեկավարի տիպարը հարստացուց նոր օրերու պահանջները բաւարարող արժանիքներով՝ անոր տալով նոր դիմագիծ, որ կը մնայ ուսանելի:

(Ծար. 2 եւ վերջ)  
ՅԱԿՈՒԲ ԵԱՓՈՒԾԵԱՆ

# ՏԵՐԵԻԱԹԱՓ Արփի Մերաս (5 Յունիս 1936 - 12 Յունուար 2018)

Արփի Ազնիւ Շամլեան Մերաս հասակ առած է գրասէր, հրաժշտասէր եւ հայ լեզուին պաշտպան եղող ընտանիքի մը մէջ, Պոլիս: Հայրը «Մարմարա» թերթի արտօնատէրն էր, որուն կանուխէն կրօնացուց: Արփի դաշնակ կը նուագէր եւ իր այդ ձիրքը զարգացուց Փարիզի մէջ: Ամուսնացաւ Միօ Մերասի հետ, եւ հաստատուեցան Գանատա, ուր ունեցան երկու տղաներ՝ Սուրէն եւ Սարօ: Արկածի պատճառաւ փթեմատը վնասուեցաւ եւ հրաժշտական ասպարէզը կիսատ մնաց: Թորոնթոյի գաղութի կազմաւորման տարիներուն մեծ ներդրում ունեցած է Արփին որպէս ՀՕՄ-ուհի եւ ուսուցչուհի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ վարժարանին, ապա ՀՕՄ-ի ամառնային դպրոցին: Հոն ծիլ առաւ «Արմենիա» պարախումբը, որ յետագային զարգացաւ եւ փառատուներու մասնակցեցաւ՝ ներկայացնելով թորոնթոյ գաղութը: Արփին ոչ միայն դաշնամուրի ընկերակցութիւնը կ'ընէր, այլեւ կը հետեւէր բոլոր մանրամասնութիւններուն, որոնց պարախումբ մը կը կարօտի կոյժ ունենալու: Թորոնթոյի «Գարաւան» փառատունին, «Երեւան» տաղաւարի ուրախութեան եւ խանդավառութեան աղբիւրն էր այդ պարախումբը, որ 9 օրեր անընդհատ կը պարէր ժամական դրութեամբ: Այցելուները անհամբեր կը սպասէին

իրենց կոյժը:  
1979-ին Օնթարիոյի վարչապետ Premier Bill Davis-էն ստացաւ Woman of the Year տիտղոսը՝ իր տարած բազմատեսակ գործունէութեանց համար՝ հայկական եւ գանատական կեանքին մէջ: Իսկ ՀՕՄ-ը 2002-ին ՀՕՄ-ի Օրուան տօնակատարութեան առթիւ Արփին պատուեց՝ իր յատուկ ներդրումին համար թորոնթոյ գաղութին մէջ: Արփին հիմնեց «Արփի» մանկամասերը եւ մանկապարտէզը 1974-ին: Հոն յաճախեցին հայ եւ օտար երեխաներ: Իր ուսուցիչներուն հետ այդ երախաներուն ուսուս հոգածութիւն, լեզուական եւ մարմնային կարողութիւններ, ճկունութիւններ, խնամք, գուրգուրանք եւ մանաւանդ ինքնափստահութիւն ու սէր՝ արուեստի հանդէպ: Մօտակայ դպրոցներէն հայ աշակերտներուն համար հիմնեց «Արփի» ուսումնարանը: Հոն հայեցի դաստիարակութիւն տուաւ՝ երգի, պարի, արուեստի եւ հայերէն լեզուի միջոցաւ: 44 տարուան ընթացքին լման սերունդ մը առիթը ունեցաւ Արփի մանկապարտէզին եւ ուսումնարանին միջոցաւ իր մշակոյթին ծանօթանալու եւ վայելելու: Ան իր աշակերտներուն համար կազմակերպեց հայաստանագնացութիւններ: Արփի իր ազգին հանդէպ տածած իր անհուն սէրը յայտնեց իր անհամար

օժանդակութիւններով, ըլլայ այդ երկրաշարժի աղէտէն վիրաւորեալներուն եւ որբերուն, հայրենի արուեստագէտներուն, Գանատա նոր հաստատուած ընտանիքներուն եւ հայրենիքի մէջ կարօտեալներուն: Այս բոլորը ըրաւ առանց ցուցամոլութեան: Իր ըրած բարիքներուն մասին տեղեկացանք միայն դիպուածով: Օրինակ՝ իր աշակերտներուն հետ անհատական նուէրներ առաւ, փաթեթեց եւ տարաւ աղէտեալ գօտիի երեխաներուն: Արփիի քրոջ դուստրը եւ թոռնուհին, իր 5 թոռները յայտնեցին իրենց վայելած յատուկ սէրը, ուշադրութիւնն ու գուրգուրանքը:  
Արփի մահացաւ 12 Յունուար 2018-ին, Հոգեհանգստեան պաշտօնը կատարուեցաւ Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ մէջ, ուր տղթոր Շաքէ Տէրմէնճեան թոքմանեանը հակիրճ ձեւով նկարագրեց Արփին: Արփին վարակեց թէ՛ իր շրջապատը եւ թէ՛ իր աշակերտները, որ իրենց կարելին ու աւելին նուիրաբերեան մարդկութեան: Արփին երբեք չտատամսեցաւ անկարելին կարելի դարձնելու նպատակին մէջ:  
Իր հարազատները գանազան առիթներով առնուած լուսանկարները ցուցադրած էին եկեղեցւոյ դաւիթը: Բացայայտ էր այդ նկարներէն իր կեանքի ուղին, իր մտեցումը եւ անսահման սէրը



դէպի երեխաները:  
Ջարմանալի էր, որ եկեղեցին հայ եւ օտար սգակիցներով լեցուն էր, որոնք եկած էին իրենց վերջին յարգանքի տուրքը տալու սիրելի Արփիին, որուն յիշատակը միշտ թարմ պիտի մնայ բոլորին սրտերուն մէջ: Ան իր անունին՝ Արփիի պէս ջերմութիւն սփռեց շուրջը, իր երկրորդ անունին՝ Ազնիւի պէս նուիրուեցաւ մաքուր սրտով եւ համեստութեամբ:  
Արշօ Զաքարեան

# Հորիզոն | www.horizonweekly.ca

<p><b>Linda Kharaboyan</b>   Notaire Notary</p> <p>Ձեր նստարանն ու իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մօզի</p> <p>Vos affaires. À cœur.</p> <p><b>Therrien Couture</b>   3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com</p>	<p><b>VIZUALIS</b> optométriste</p> <p><b>DR SHANT DONABEDIAN</b></p> <p>Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire</p> <p>514 695 2555 - VIZUALIS.CA</p>	<p><b>PHOTO Cristal</b></p> <p>(514) 744 4313</p> <p><b>Berj Merdjanian</b></p> <p>Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement</p> <p>Video - Reproduction</p> <p>647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocristal@hotmail.com www.photocristal.com</p>
<p><b>Assura Bien inc.</b></p> <p>Cabinet en assurance de dommages et de services financiers</p> <p>Ապահովագրական գրասենեակ</p> <p><b>KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN</b></p> <p>970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7 T: 514.903.3999</p>	<p><b>RITA BAGHDASSARIAN</b></p> <p>Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager</p> <p>COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CEL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE &amp; HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE &amp; COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT</p> <p>3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com</p>	<p><b>TAXI MIRABEL</b> 450-430-2650</p> <p>Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միքայէլ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արապին (514) 979-1317 թիւին:</p> <p>Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. <b>Call/Appelez: (514) 979 1317</b></p>
<p><b>RE/MAX</b> RE/MAX 3000 inc. Agence Immobilière</p> <p><b>Elie Berberian</b> Courtier immobilier   Real Estate Broker</p> <p><b>C 514.519.3543 B 514.333.3000</b></p>	<p><b>ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN</b></p> <p>POSE D'ONGLES RÉSINE ET POUDRE MANICURE &amp; PÉDICURE AVEC GEL RECouvreMENT SUR ONGLES NATURELS</p> <p>Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL</p>	<p><b>KRIKOR MAROUNIAN RLU</b> Independent Financial Security Broker</p> <p>Life Insurance • Disability &amp; Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance</p> <p>11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com</p>
<p><b>FIVE STAR ELECTRIQUE</b> CINQ ÉTOILES</p> <p>SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL</p> <p><b>BEDROS NALPATIAN</b></p> <p>442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM</p>	<p><b>CENTUM™</b> Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders</p> <p><b>SOSIE DERNERSESSIAN</b> MORTGAGE AGENT LICENCE #M12001830 716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4</p> <p>416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian</p>	<p><b>ALINE BEKEREJIAN</b> NOTAIRE - NOTARY</p> <p>180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5</p> <p>T 514.382.7222 F 514.381.1818 aline.b@notarius.net www.abnotaires.com</p> <p>Նստար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Դեբերճեան</p>

**ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ**

**Համագրայինի 90 ամեակի ձեռնարկներ՝**  
Մոնթրեալ 14 Հոկտեմբեր 2018  
Թորոնթո 27 եւ 28 Հոկտեմբեր 2018  
Կը խնդրուի չխաչաձեւել

**ՄՈՆԹՐԷԱԼ**

**Համագրայինի վերանորոգում «Մուշեղ Իշխան» գրադարանի ժամանակացոյց.** - Մարտի սկիզբէն, երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը կ.ե. ժամը 1:00-5:00 իսկ Կիրակի օրերը առաւօտեան ժամը 11:00-էն կ.ե. ժամը 2:00: Մոնթրեալի Հայ կեդրոն, գետնայարկ, ՀՕՄ-ի Ծաղկոցին կից - 514 337-7753: Գրադարանը բաց է գրասէր հասարակութիւնը գոհացնելու համար:

Համագրայինի «Թէյ, սուրճ եւ կարծիքներ» ակումբը կը կազմակերպէ՝ «**Ջապել Եսայեանի հետ**»: Գրագէտին կեանքն ու գործերը կը ներկայացնէ Աննու Սկնեբեան, Չորեքշաբթի Ապրիլ 4, 2018 երեկոյեան ժամը 7:30-ին Ա.հարոնեան սրահ:

**Պառլոն՝ Montreal Museum of Fine Arts, Napoleon** (Art and court life in the imperial palace) երեքշաբթի Ապրիլ 10 առաւօտեան ժամը 10-ին, մեկնում Հայ կեդրոնէն: Մանրամասնութեանց համար դիմել՝ diroug@gmail.com

**ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ**

Համագրայինի Գանատայի շրջանային վարչութիւնը կը շնորհաւորէ վաստակաւոր համագրայնական, Համագրայինի կեդրոնական վարչութեան նախկին անդամ - Համագրայինի շխանակաւոր Տոբ. Վազգէն Տէր Գալուստեանը, Albert Nelson Marquis Lifetime Achievement Award-ին արժանանալուն առիթով:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Ողբ. **ՅԱԿՈԲ ԵԱՓՈՒՃԵԱՆԻ** մահուան քառասունամեակն արթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Ապրիլ 2018, Ա. Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. Պատարագի: Սգակիրներ՝ տիկին Սոնա Եսփունեան, զաւակը Հայկ, տէր եւ տիկին Վարանդ, Վանա Եսփունեաններ, տէր եւ տիկին Հրայր, Լալէ Եսփունեաններ, Լոռի, Բաֆֆի Եսփունեաններ, տէր եւ տիկին Յակոբ, Մարալ Նազարեան եւ զաւակը՝ Նարէկ, Արանեան ընտանիք, համայն Եսփունեան, Գալայեան ընտանիքներ:



**ՑԱԻԱԿՑԱԿԱՆ**

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինը ցաւակցութիւն կը յայտնէ ընկ. Զաւէն Տէր Սահակեանին իր մօր՝ **ԵՂԻՍԱՓԷՍ ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆԻ** մահուան առթիւ:

ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» Կոմիտէն ցաւակցութիւն կը յայտնէ ընկերներ երուանդ եւ Զաւէն Տէր Սահակեաններուն իրենց մօր՝ **ԵՂԻՍԱՓԷՍ ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆԻ** մահուան առթիւ:

**ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ**

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնը բարի ապաքինում կը մաղթէ «Հորիզոն» թորոնթոյի ներկայացուցիչ եւ աշխատակից ընկ. **ԳՐԻԳՈՐ ՀՈՒՅԵԱՆԻ**ին:

**Armenian Heritage Cruise XXII 2019**

**Miami, FL - Armenian Heritage Cruise XXII 2019 January 20-27, 2019 - Western Caribbean Cruise aboard of Royal Caribbean's Allure Of The Seas.**  
Traveling to Nassau / Cozumel / Roatan / Costa Maya. Cabin Rates starting from US \$949 / person based on Double Occupancy, including Port Charges and ACAA registration fee. Government taxes of \$137.45 are additional. Armenian Entertainment, Armenian Cultural Presentations, Armenian Festival Day, Tavliou and Belote Tournaments and much more. Call TRAVEL GROUP INTERNATIONAL @ 1-561-447-0750 or 1-866-447-0750 Ext.108, contact person Janie

Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

**RBQ# 1812-6474-22**

**www.adamselevator.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE, INSTALLATION OF ELEVATORS.**

**Eddie, Pedro, Joyce Oughourlian**

**ÆTERNA**  
Complexe funéraire • Crématorium  
Funeral Complex • Crematorium

ComplexeAeterna.com  
514 228-1888

**POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE**

**FOR A CONTEMPORARY CEREMONY**

New alternative in funeral services in Montreal

Nouvelle alternative dans le domaine funéraire à Montréal

**horizon**

**HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly**  
Publié par / Published by Les Publications Arméniennes (1991)  
3401, Olivar-Asselin  
Montréal, Québec  
Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription Canada**  
2<sup>e</sup> classe - 2<sup>nd</sup> class: \$80 plus applicable taxes  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95

**États-Unis / USA**  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95 US

**Ailleurs / Elsewhere**  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$125 US

**Administration / Publicité**  
Sylva Ehramdjian-Bachekjian (General Manager)  
Tél.: (514) 332-3757  
Télécopieur/Fax (514) 332-4870  
E-Mail: sylvia@horizonweekly.ca  
Courier de deuxième classe  
/No. 40065294 / Second class mail  
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921  
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

**Վարիչ խմբագիր**  
Վահագն Գարագաշեան  
**Վարչական պատասխանատու**  
Սիլվա Պաշոգճեան  
**Քարտուղար**՝ Մարինա Տէր Խաչատուրեան  
**Աագ խմբագիր**  
Վրէժ-Արմէն Արքիմեան  
**Անգլերէն/Ֆրանսերէն**՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլահեան  
**Չեռատրում**՝ Նէնսի Կիրակոսեան  
**Սրբագրիչ**՝ Սոնա Թիթիկեան

**Լուսանկարիչներ**՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le gouvernement du Canada  
Funded by the Government of Canada

**Canada**

# ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



**ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ) - Երկար ժամանակ է վեր սպասուած սերը պիտի թափէ սրտիդ դուռը, ուրախութիւնդ անսահման պիտի ըլլայ, բաց սրտիդ դռները եւ ապրէ՛ նոր կեանք մը՝ սիրով եւ ցնծութեամբ լի: Տեր եղիր այս սիրոյն, որովհետեւ այսքան անկեղծ սեր քիչ կը հանդիպի կեանքի ընթացքին:

**ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) - Երկար ժամանակ է վեր ընտանիքդ հեռու եւ, անոք առանձին կը զգան առանց քեզի, վերադարձի՛ր իրենց քով եւ սիրով պարուրէ ընտանեկան մթնոլորտը, որպէսզի ջերմանայ օճախդ: Որքան ալ խճողուած ըլլայիր այսքան հեռանալու չէիր ընտանիքդ:

**ԵՐԿՈՒՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) - Այս շաբաթ չափազանց խճողուած եւ, հիւրեր կ'ընդունիս հեռաւոր երկիրներէ, ընկերներ, բարեկամներ եւ ազգականներ: Ընտանեկան եւ ընկերային շատ հաճելի մթնոլորտի մը մէջ հաճելի ժամանակ պիտի անցընես:

**ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) - Երկար արձակուրդը հաճելի չթուցաւ քեզի, ձանձրոյթ պատճառէ: Դետեալաբար հաւաքէ՛ ուժերդ եւ վերադարձիր աշխատանքիդ՝ նոր թափով եւ աշխուժութեամբ: Գործընկերներդ ալ անհամբեր քեզի կը սպասեն, որովհետեւ սիրուած եւ բոլորին կողմէ:

**ԱՌԻՒԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) - Ծամբորդութիւն մը պիտի վերաթարմացնէ ուժերդ, փորձէ՛ ամենամօտ ատենին արձակուրդ մը առնել եւ հանգստանալ: Ընտանեկան դժուարութիւններ պիտի ունենաս այս շաբաթ, փորձէ՛ համբերատար եւ փափկանկատ ըլլալ:

**ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Գործերդ կուտակուած են, շատ խճողուած եւ, եթէ այսպէս շարունակես՝ պիտի թերանաս, եւ գործատեղդ պիտի դժգոհի: Ամիջապէս դասաւորէ՛ գործերդ, սկսի՛ր ամենէն կարեւորը, որպէսզի կարգով կարենաս ամբողջացնել զանոնք:

**ԿՇԻՈՔ** (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Նոր անձի մը հետ ծանօթութիւն պիտի ունենաս, որ շուտով բարեկամութեան պիտի վերածուի: Այս բարեկամութիւնը տարիներ պիտի տես, հետեալաբար մտահան չընես ծանօթութեան առիթն ու վայրը, յետագային միշտ պիտի յիշես զանոնք:

**ԿՐԻԻԾ** (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Երկար ատեն է վեր գործի ասպարէզիդ մէջ պաշտօնի բարձրացում կը սպասես: Այս շաբաթ պիտի արժանանաս անոր: Այդ մէկը քեզի նոր թափ եւ աշխուժութիւն պիտի շնորհէ, եւ վերանորոգուած ոգիով պիտի շարունակես գործը:

**ԱՂԵՂԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Միշտ հետեւէ՛ ներքին զգացումներուդ, անոնք քու ճամբարդ կ'ուղղեն: Շուրջիններուդ խրատները անտեսէ՛, որովհետեւ վերջերս շրջապատուած ես նախանձոտ մարդոցով: Չգոյշ եղիր այս շրջանին:

**ԱՅԾԵՂՁԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Երկար ատեն է վեր միայն գէշ լուրեր կը ստանաս: Այս շաբաթ սակայն միայն լաւ լուրեր պիտի լսես, հոգեկան վիճակդ կը բարելաւուի, եւ տրամադրութիւնդ բարձր պիտի ըլլայ: Ուրախութիւնդ բաժնեկցիր ընկերներուդ հետ:

**ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար) - Դաճելի արձակուրդ մը կ'երագես, սակայն այս շրջանին պիտի չկարենաս առնել: Աշխատանքային դժուար եւ ծանրաբեռնուած ժամանակաշրջան մը կը սպասէ քեզի: Չա՛նց առերազային ծրագիրներդ եւ կեդրոնացի՛ր աշխատանքիդ վրայ:

**ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) - Աշխատանքը մտային եւ մարմնային լաւագոյն մարզանքն է, հետեալաբար հաշտ եղիր քեզի վիճակուած աշխատանքին հետ եւ համակերպի՛ր: Մօտօրէն արձակուրդ պիտի առնես, հետեալաբար գործերդ կարգաւորէ՛ եւ պատրաստուէ՛ արձակուրդի:

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑ-ԻՈՅ, ԹՈՐՈՆԹՕ**  
Մելքոնեան Նուրէ-ի մահուան եօթնօրէքէն  
Նորա Անգրանիկ 100  
Նազարեան Պարզեւի, Աչճեան Գրիգորի եւ Մարիամի Հոգիներուն Շանթ եւ Սիլվա Ռոսորով 20  
Ազիզ Մաթի-ի Հոգւոյն Յարութի եւ Սառա Միրզոյան 20

**Մելքոնեան Նաչիկի Ա. տարելիցին**  
Տէր եւ Տիկ. Յարութիւն Յարութիւնեան 20  
**Աֆարեան Կիւլէնեա-ի 40-քին**  
Պետրոս եւ Անահիտ Պաթրոս 100  
Միհրան եւ Մայտա Ուզունեան 50  
Վազգէն եւ Լիւսի Թէրզեան 60  
ՄՀէտ եւ Հիլդա Ռոսորով 200  
Աբրահամ եւ Մատիէ Աղաճանուկեան 50  
Յարութի եւ Անի Մատենեան 25  
Վազգէն եւ Աստղիկ Աֆարեան 100  
Վարդէն Աֆարեան 20  
Ճէրի Էքէզեան 50

**Շիշոյեան Անդրանիկ 40-քին**  
Տէր եւ տիկ. Յովիկ Շիշոյեան 100  
**Թարգի Ժիլպէրի 40-քին**  
Տիկ. Բեննա Թարգի եւ զաւակը Սերժ 100  
Ալեքս եւ Անի Թարգի 50  
Տիկ. Իվոն Թարգի եւ զաւակը Ջորջ 50  
Եղեայեան ընտանիք 50  
Ճորճ եւ Սօսի Տէր Գասպար 200  
Արմէն եւ Արշօ Աստուրեան 50

**Մելքոնեան Նուրէ-ի 40-քին, Մելքոնեան Նորայրի եւ Սարգիսեան Անժէլի Հոգիներուն**  
Վարդանուշ Նալպանտեան 50  
**Հայէթեան Ճորճի Հոգւոյն Տիկ. Մարի Մովսիսեան** զաւակունք 130  
Թիւֆէնկեան Երուանդի Հոգւոյն Տիկ. Մունա Պապիքեան 25  
Ղազարեան Սերոբի 40-քին Սարգիս եւ Վարդուհի Ղազարեան 50  
Մանաս եւ Լիւսիա Ղազարեան 50  
Կարպիս եւ Յասմիկ Հանէշեան 40

**Մուսաբեկեան Գրիգորի մահուան եօթնօրէքէն**  
Մահուան եւ Մարալ Սէթեան 100  
**Աստուրեան Կարօ-ի մահուան եօթնօրէքէն**  
Կարօ եւ Նորա Սարգիսեան 100  
Սերբեան Նուպարի, Յասմիկի եւ Փամպուքեան Մարի-ի Հոգիներուն  
Նորա Սերբեան 100  
**Մկրտիչեան Հայկազի, Սահակի, Բագրատի, Սուրբիկի, Արա-ի եւ Մարթա-ի, Կարապետեան Արուսեակի եւ Սահակեան Բարգէշի Հոգիներուն**  
Մասիս Մկրտիչեան 200  
**Թէրզեան Լուսինի 19-րդ տարելիցին**  
Տոքթ. Յովսէփ եւ Մարալ Պաղտատեան 100  
**Ճըզլեան Սիրանի եւ Համայն Ճըզլեան եւ**  
Գույուճեան գերբաստանի ննջեցաւներու Հոգիներուն  
Հրայր եւ Ալին Թիթիկեան 25  
**Բանիկեան Յարութիւնի 2-րդ տարելիցին**  
Տիկ. Անժէլ Բանիկեան 50  
**Պողոսեան Աւետիսի 3-րդ տարելիցին**  
Տիկ. Լուսին Էքէրեան 20  
**Տէկիրմէնճի Ստեփանի 10-րդ տարելիցին**  
Տիկ. Մակի Տէկիրմէնճի 40

**Տապալազեան Յակոբի Հոգւոյն**  
Երուանդ եւ Մանուշակ Տապալազեաններ 50  
**Հայկուհի Նալպանտեանի մահուան առիթով**  
Տէր եւ Տիկ. Մարք Նալպանտեան 50  
Սանազ Հոման 100  
Արի եւ Վարդուկ Քէսիկեան 20  
Սիրարփի Աթիքեան 30  
Վահէ եւ Հոփի Թորմաքեան 100  
Լուսին Հատտատ 30  
Կարապետ Քարբուլթեան 30

Աբրահամ եւ Օսիկ Մխաթար-թինեան 100  
Անի Նազարեան 50  
Յակոբ եւ Ժիւլիէթ Ճանպազեան 50  
Այտա Տէր Վարդանեան եւ ընտանիք 50  
Գէորգ եւ Մարի Սազարեան 50  
Վահէ Գրիգորեան եւ ընտանիք 50  
Լենա Արթինեան 60  
Ճորճ եւ Մարիա Ապաճեան 50  
**Ստեփան Գետրոսեանի մահուան առիթով**  
Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Երէջ Դպրաց Դաս 25  
Սուրէն Քէլտարեան 20  
Վարանդ եւ Սեղա Աթանոսեան 20

**ՀՕՄԻ ԱՄԵՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ, ԹՈՐՈՆԹՕ**  
**Շահէ Քէլապաճեանի մահուան առիթ**  
Պարսամեան Գէորգ 100  
Հրեշտակեան Արմեն - Մարալ 50  
Հրեշտակեան Անահիտ 50  
Փիլաճեան Թամար 50  
Թորոսեան Արամ եւ Վարթենի 50  
Գերձակեան Յարութիւն եւ Սոնա 100  
Մարգարեան Արմեն եւ Լորին 100  
Ճանպազեան Յակոբ եւ Ժուլիէթ 50  
Թաշճեան Յակոբ եւ Սեղա 50  
Մակարեան Վահէ եւ Թամար 100

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ» ԳՐԱԳԱՐԱՆԻՆ**  
Թերզեան Աբրահամ 50  
Քէօրողեան Զաւէն 20  
Իրենց մօր մահուան տարելիցին առթիւ  
Զաւէն Քէօրողեան եւ Ազգանոյշ, Զարեհ, Սարգիս, Հայկ-Արամ Տօլմաճեաններ 50  
Գիրք նուիրած են  
Էլիփէկեան Արեք Ինճէլիկեան Յասմիկ  
Չոքաշեան Մարօ  
Պետրոսեան Նարայեյ  
Զարեան Սիրվարդ  
Համազգային կեդրոնական վարչութիւն  
Մածունեան Արա

**ՍՈՒՐԱ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐ-ԳԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԹԻՆ Պաշտօնակալին 23-րդ, Նորնոյ Պուկարեանի 2-րդ, Նուարդ Քիրէմիճի Պաշտօնակալի Ա. տարելիցներուն, Գալթաքեան, Պաշտօնակալի, Պուկարեան, Քիրէմիճի, Մկրտիչեան, Պետիկեան, Բաբախեան գերբաստանաց ննջեցելոց**  
Րօզա Գալթաքեան Պուկարեան 100  
Մանուկ, Սիլվա Մկրտիչեան 100  
Յակոբ, Աննա Պուկարեան 100  
Յակոբ, Թամար Զուլեան, զւկը. 200  
Պետիկ, Սոնիկ Վարձպետեան 50  
Ռաֆֆի, Անիթա Աբանեան, զւկը. 50  
Մայք, Սոնիա Գուզուճեան, զւկը. 50  
Վարանդ Բաբախեան 50  
Սարգիս Գուզուճեան 50  
Տ. եւ Տ. Ռաֆֆի Ժապալեան, ընտը. 50  
Մարի Գաֆէսճեան 50  
Արթիւր, Նորա Արզարեան, զւկը. 40  
Տ. եւ Տ. Աբրահամ Շաքար 50  
Սեւան, Ալիք Աբանեան 50  
Յարութիւն, Մարլէն Բարակէօզեան 50  
Վահէ, Բիթա Շէրիքեան 60  
**Սիրանուշ Յակոբեանի Ա. տարելիցին**  
Միհրան, Տէսքինա Յակոբեան 50  
**Հէրման Քէօսէեանի 40-ին**  
Անայիս Քէօսէեան 50  
Տ. եւ Տ. Գարբիէլ Քէօսէեան, զւկը. 50  
Ալին Կիւլէսեան 15  
Անահիտ Տէրտէրեան, զւկը., Աւետիս, Յասմիկ Սալիքեան, Մինաս, Լինա Սալպեան, զւկը. 50  
Աստղիկ Էսմէրեան 20

Լուսին Մարտեան 20  
**Վազգէն Մարտեանի 40-ին**  
Այտա Կարիկեան Մարտեան 100  
Զարուհի Մարտեան Լըմէ 40  
Ռուբէն Մարտեան 40  
Լուսին, Սասուն Մարտեան 30  
Փիլէո, Մովիկ Թերզեան, զւկը. 50  
Ժազլին Մարտեան, զւկը. 20  
Տ. եւ Տ. Տարօն Մարտեան 20  
Տ. եւ Տ. Ռատի Բամիա, զւկը. 20  
Սոնիա Էքէզեան, զւկը. 50  
Տ. եւ Տ. Վարդգէս Նահապետեան 20  
**Միհրան Քէլապաճեանի Բ. տարելիցին, Սարգիս Գալայճեանի Ա. տարելիցին**  
Աւետիս, Շաքէ Գալայճեան 20  
Ռեպեքա Քէլապաճեան, զւկը. 25  
Լեւոն Գալայճեան, ընտը. 50  
Վարուժ, Նայիրի Գալայճեան, զւկը. 40  
Ճօ, Մարալ Քէօլէեան, զւկը. 40  
**Պետրոս, Իվոն, Յարութիւն Նարկիզեաններու, Գրիգոր Շահինեանի Հոգւոց**  
Տ. եւ Տ. Գէորգ Նարկիզեան 50  
Տ. եւ Տ. Պետիկ Նարկիզեան 50  
Տ. եւ Տ. Ժօզէֆ Մալօ 50  
Տ. եւ Տ. Ժազ Շահինեան, զւկը. 20  
Զարեհ, Սիլվա Շահինեան, զւկը.,  
Գրիգոր, Թինա Շահինեան 50  
Մայք, Սոնիա Գուզուճեան, զւկը. 25  
Վարդան, Նայիրի Բաբախեան, ընտը. 50  
**Յակոբ, Յովհաննէս, Մարբուճի, Միքայէլ, Յարութի Զէյթունցեաններու Հոգւոց**  
Տ. եւ Տ. Մովսէս Արզարեան, Տ. եւ Տ. Վարդան Համալեան, զւկը. 20  
**Պարտասար Պալեանի 46-րդ տարելիցին, Պալեան, Պայրազարեան, Տօնապետեան, Մաժուկեան գերբաստանաց ննջեցելոց**  
Մարի Պալեան, զւկը., Թոնոնք 20

**Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԼԱՌԱԿԱԿԱՆ**  
Ողբ. ԱՋԱՏՈՒՀԻ ԳՈՋԱՆԵԱՆ-ՊԱՌՈՆԵԱՆԻ մահուան 40-ին առթիւ:  
Տ.Տ. Միհրան, Պարոնեան, զաւակներ եւ թոռներ 500  
Տ.Տ. Արամ, Մէլիստա Պարոնեան, զաւակներ եւ թոռներ 500  
Ռուպինա եւ Թէս Պարոնեան 500  
Տ.Տ. Սարգիս Գոզանեան, զաւակներ եւ թոռներ 40  
Տ.Տ. Նազարէթ, Մարգրիտ Ուստայեան, զաւակներ եւ թոռներ 25  
Տ.Տ. Վարդան, Ծաղիկ Պարոնեան եւ զւկը. 100  
Տ.Տ. Լեւոն Կուլեան 100  
Տ.Տ. Արտէն, Քրիսթին Տէրվիշեան 100  
Տ.Տ. Ռաֆֆի, Մարալ Ճինպալեան եւ զւկը. 40  
Տ.Տ. Յարութի, Սեղա Պոյաճեան եւ զուստը 30  
Տիկ. Մարբուճի Ճինպալեան 20  
Տ.Տ. Սարգիս, Մանան Ապրազեան եւ զւկը. 50  
Տիկ. Սօսի Ուստայեան եւ զւկը. 50  
Տ.Տ. Սարգիս Մանուկեան եւ զւկը. 20  
Հիլտա Գոզանեան 30  
Տիկ. Քնար Գոզանեան եւ զւկը. 20  
Տ.Տ. Սազօ, Արմիկ եւ զւկը. 50  
Տ.Տ. Գէորգ, Սառա Էօզկիւնսիլզ եւ զւկը. 25  
Տիկ. Տիգրանուհի Թօփուզեան 50  
Տ.Տ. Հրաչ, Անի Գարբիէլեան եւ զւկը. 25  
Տ.Տ. Մարգար, Մարիա Ճէրէճեան 30  
Տ.Տ. Արտօ Գարբիէլեան 30  
Տ.Տ. Կէպիլ Զափարեան եւ զւկը. 40  
Տիկ. Ալին Զափարեան 20  
Տ.Տ. Ռուբէն, Սիւզան Աշգարեան 25  
Տ.Տ. Սիմոն Յակոբեան եւ զւկը. 25  
Տիկ. Հոփիսիմէ Տիշէքէեան 10

**Ողբ. ՀՐԱՅՐ ԳԱՋԱՆՃԵԱՆԻ մահուան 5-րդ տարելիցին առթիւ:**  
Տ.Տ. Հրայր, Սօսի Ժուլպազեան եւ զւկը.,  
Տ.Տ. Կարօ, Նուարդ Պըշաքեան 60  
**Ողբ. ԱՐՓԻ ՀԻՄԻՏԵԱՆԻ մահուան 3-րդ տարելիցին առթիւ:**  
Տիգր Նուպար Հիմիտեան 20  
Տ.Տ. Յակոբ, Ալին Գամճեան եւ զւկը. 20  
Տ.Տ. Վիգէն, Քարօլին Հիմիտեան եւ զւկը. 100  
Տ.Տ. Յարութի, Անի Եվէրէքեան 50  
Տիկ. Ժազլին Աճօ  
**Ողբ. Հ.Օ.Մ.-ի անդամ-անդամուհիներուն եւ բարերարներուն յուշակալէս՝ Նաչատուր Մարտեանի, Լեւոն եւ Սօֆիա Յակոբեաններու, Սամուէլ եւ Ալանի Երեմեաններու, Արաքսի Բրուտեանի, Հայկանոյշ Կարապետեանի, Բասարմաճեան եղբայրներու, Վարդուհի Ալլահալերտեանի, Պերճուհի Ամիրեանի, Սօսի Ռաքելեան-Փալանճեանի, Ռոզ Աւետիսեանի, Զուարթ Տէրպէրեանի, Ատէլ Պերճեքեանի, Անահիտ Պոտուրեանի, Հոփիսիմէ Պոյաճեանի, Ռահել Պոյաճեանի, Կիւլէնա Շամբեանի, Տիգրանուհի Քարապետեանի, Նուարդ Տէմիրճեան-Լափաշեանի, Աղանի Տէր Ազամեանի, Սարիամ Տօլմաճեանի, Թագուհի Շահելպաշեանի, Իսկուհի Յովհաննեանի, Էվլին Յովհաննէսեանի, Ջարուհի Զոքաքեանի, Էլիզապէթ Քարբիլեանի, Արաքսի Քարապետեանի, Տիրուհի Քէլապաճեանի, Թագուհի Նաչըմճեանի, Ժանէթ Գուզուճեանի, Դրուանտա Գոզանեանի, Պայճուր Մարտեանի, Մարի Մարգէլեանի, Անժէլ Միրազեանի, Արաքսի Բարսեղեանի, Լուսին Պալանճեանի, Հայկանոյշ Բուշիկեանի, Մանուշակ Ռազեանի, Լիւսիա Սինանեանի, Ազնիւ Գալպաղիսեանի, Արաքսի Թորոյեանի, Ռահել Եսանպաթեանի, Սրբուհի Երամանի, Էլիզապէթ Թահանեանի, Ազատուհի Պարոնեանի, Զուարթ Մանուկեանի եւ Սիրանոյշ Աղազարեանի յիշատակին:  
Հ.Օ.Մ.ի Շուշի Մասնաճիւղի վարչութիւն 200  
Տ.Տ. ՄՀՆք, Լուսիա Պէրպէրեան եւ զւկը. 20  
Տ.Տ. Վահէ, Սօսի Պէրպէրեան եւ զւկը. 20  
Տ.Տ. Հրաչ Գարայեան 30  
Տ.Տ. Լեւոն, Աստղիկ Նաչըմճեան 30  
Օրդ. Սեղա Կէտիկեան 20  
Ընկճի Ազգանոյշ Հատիտեան 25  
Ընկճի Մարալ Պէրպէրեան 25  
Ընկճի Անժէլ Քիրիլեան 20  
Ընկճի Մարալ Յովսէփեան 30  
Ընկճի Ժօթօ Պետրոսեան 50  
Տ.Տ. Արտօ Գարբիէլեան 40  
Տ.Տ. Ճորճ, Տալիտա Պալիտզեան 20  
**Ողբ. ԱՏԷԼ ՉԷՐՔԷՋԵԱՆ-ՊԵՐՃԻՔԵԱՆԻ մահուան 4-րդ տարելիցին առթիւ:**  
Տ.Տ. Սարգիս, Մարի Պերճեքեան եւ զւկը. 20  
Տ.Տ. Միքայէլ, Սիլվա Պերճեքեան եւ զւկը. 30  
**Ողբ. ՍՐԲՈՒՀԻ ԵՐԱՄԵԱՆԻ մահուան 2-րդ տարելիցին առթիւ:**  
Տ.Տ. Սաման, Այտա Հալապ 20  
Տ.Տ. Ֆրանսուա, Լիլիան Տուէ 25  
Տիկ. Սիւզան Հալապ 20  
Տ.Տ. Աւետիս, Վիլիամ Բանոյեան եւ զւկը. 20  
**Ողբ. ՅԱՐՈՒԹԻՆ ԵՒ ՄԱՐԻ ՄԻՆԱՍԵԱՆՆԵՐՈՒ յիշատակին:**  
Տ.Տ. Սարգիս, Մանան Ապրազեան եւ զւկը. 50  
**Ողբ. ԳԱՆՆԻԿ ԱՆԵՏԻՍԵԱՆԻ մահուան 4-րդ տարելիցին առթիւ:**  
Տ.Տ. Սաման, Այտա Հալապ 20  
Տիկ. Էլիզ Աւետիսեան 20**

Այցելեցէք «երկիր»ի կայքէջը՝ [www.yerkir.am](http://www.yerkir.am)

# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS  
RISK-FREE**  
Call 416 754-4327

699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*



BARRY



KAREN



GARO

# KAZANDJIAN



514

## 333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

12345, Beauséjour

RÉCEMMENT VENDU

3940, Bélanger

RÉCEMMENT VENDU

3061, rue Jean-Bouillet

À VENDRE 379 000 \$

3740, Pierre-Daviault

À VENDRE 3 388 000 \$

2286, Kaufman

À VENDRE 349 000 \$

9033, Boul. Gouin O.

À VENDRE 1 950 000 \$

12211, Green Lane

À VENDRE 1 378 000 \$

12445, Av. Joseph-Edouard-Samson

À VENDRE 1 588 000 \$

83, des Roseaux

À VENDRE 1 198 000 \$

1533, Alexis-Nihon

À VENDRE 499 900 \$

4105, Claude-Henri-Grignon

À VENDRE 2 988 000 \$

## EXPERTISE

## EXPÉRIENCE

## EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE  
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5